



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակը՝ ուղղուած Յոբէլեար Վեհափառ	տեղ
Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ.	322
Բիւր ողջոյն երկաւր կեանք...	ԽՄԲ. «ԷՋՄԻԱՍԻՆ» ԱՄՍԱԹԵՐԹԻ 324
... եւ նոյնչափ ողջոյն եւ արտաբուխ մաղթանք...	ԿԻՒՐԵՂ Բ. ՊԱՏՐԻԱՐԿ 327
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Վեհափառ Յոբէլեար Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս	
Մեծի Տանն Կիլիկիոյ.	329
Վարսունամեայ Յոբէլեան Վեհափառ Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի	
Մեծի Տանն Կիլիկիոյ.	332
Յոբէլիմական հանդեսներ՝ Եաֆայի, Հայֆայի եւ Ամմանի մէջ.	343
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	
— Գարեգին Կաթողիկոս.	ԵՂԻՎԱՐԻ 344
Արեւելահայ բանասիրութիւնը եւ էջմիածին.	Յ. ՕՇԱԿԱՆ 345
Ասխատանքի գաղափարը Քրիստոնէութեան մէջ.	ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ 353
ԳՐԱԽՕԾԱԿԱՆՆԵՐ	
— Դեպի լոյս եւ կեանք.	Ե. Վ. Տ. 358
— Աստուածաթիպ մարդը.	Ե. Վ. Տ. 260
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ ուղղուած	
Նիւ Եորքի Համահայկական ժողովին.	362
Քայանդաններ ի պատիւ Վեն. Կաթողիկոսին.	366
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ	
— Ամսօրեայ լուրեր.	367
ՏԻՐՈՒՆԻ	
— Նիկոլ Աղբալեան.	368

ԲԱԺՆԵԳԻՒՆ

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգիրն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 10

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

Հասցէ՝ Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcāt Arménien, Jérusalem-Palestine

Ս Ի Ո Ն

ԻՍ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1947

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 9



ՅՈՐԵԼԵԱՐ՝ ՎԵՀԱՓԱՌ՝ ՏՆՏ՝ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԲԱՂԵԿՈՍ՝
ԴԵՐԻ ՅԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՔ ԱԶԳԻՆ ԵԳԻՍՎՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՑ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՅ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵԱՌՆ ԳԱՐԵԳԻՆ Ա.
ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑՍ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ԵՂԲՐՈ ՄԵՐՈՒՄ
ՍԻՐԵԼԻՈՑ ՈՂՋՈՑՆ ՏՐԻԱՒԱՆԴ

Մենք համայնում ենք Ձեզ պատանեկութեան հառաքից, որպէս Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի ընդունակ, ջանասէր եւ պարկեճ ուսանող: Շնորհիւ Ձեր ընդունակութեան եւ ջանասիրութեան՝ Ձեր ճեմարանական ուսման պաշարը հարստացրիք ու կատարելութեան հասցրիք բարձրագոյն կրթութեամբ եւ ամբողջովին նուիրուեցիք Հայ Եկեղեցուն եւ Հայ ժողովրդի հոգեւոր անդաւաճանի մեակման:

Ձեր գործունէութեան անդրանիկ ասպարէզը ճեմարանը հանդիսացաւ, ուր երկա՛ր տարիներ գործեցիք, որպէս ուսուցիչ եւ տեսուչ՝ դաստիարակելով հայ մասալ սերունդը ազգային եւ քրիստոնէական լայն մարդասիրական ոգով, եւ տուիք Հայ Եկեղեցուն եւ Հայ կեանքին օգտակար գործիչներ:

Ձեր այդ բազմազգալ աշխատանքների շնորհիւ եւ այնուհետեւ՝ իջա՛մ նաեւ զբաղեցան ասպարէզ՝ թալով պատմական, մասնագրական, հնագիտական արժէքաւոր աշխատանքներ, որոնց զուլս գործոցը պիտի հանդիսանայ Ձեր Հայ Մամրանկարչութեան պատմութիւնը:

Գործեցիք նաեւ Եկեղեցական-Վարչական ասպարէզում՝ վարելով բազմապիսի պաշտօններ եւ Ձեր վարած բոլոր պաշտօններումն էլ առաջնոր-

գրեցի՜մ միայն ու միայն հայ սարագիր ու սառապեալ ժողովրդին օգտակար լինելու գաղափարով, ուսի եւ սիրուեցա՜մ ժողովրդից:

Ձեր անցեալ արդիւնաւէտ գործունէութիւնը, Ձեր ժողովրդաւէր եւ մարդասէր ոգին եւ հանդէպ Ձեր՝ ժողովրդի սածած սէրը առաջնորդեցին Ձեզ դէպի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական գահը, ուր այսօր էլ նոյն ոգով գործում էք:

Անճամարելի չպիտի անցնի ու ընդգծելի է Ձեր գործունէութեան եւ այն գիծը, որ Դուք՝ Ձեր գործունէութեան բոլոր ասպարէզներում, միշտ հաւատարիմ էք մնացել Ձեր վանական ռիւսին՝ ամբողջովին նուիրուել Ս. Էջմիածնին, որ մայր է Հայ Եկեղեցիների, որ Հայ ժողովրդի պատմական դաստիարակն է ազգային, կրօնական եւ մշակութային ասպարէզներում:

Եկեղեցու եւ Ազգի մեակը չի կարող Հայոց Հայրապետի աչքին անճամարելի մնալ: Մենք, որպէս Պետ Հայ Եկեղեցու, որպէս Ամենայն Հայոց Հայրապետ, Մեր այս Հայրապետական կոնգակով, ի ճիշտութեամբ Ձեր անձնական բարձր արժանիքների, Տալիս ենք Շնորհազարդութեանդ անձնական իրաւունք՝ կրելու Ձեր վերաբերման վերայ աղաւանդեալ խաչ, հաւատարմով, որ դորանով Մենք ժողովրդի եւ Հայ հոգեւորականութեան ցանկութեան արժայտիչն ենք հանդիսանում:

Աստուածային օրհնութիւնն ենք հայցում Ձեզ վերայ նոյն ոգով եւ եռանդով գործելու յօգուտ Հայ Եկեղեցու, Հայ ժողովրդի, եւ Հայրենի երկրի:

Մաղթում ենք նաեւ արեւաշուքին, որ Դուք Տեսնէք Հայ ժողովրդի եւ Հոգեւորականութեան պատմական իղձերի կատարումը եւ մխիթարուէք:

Շնորհ եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իջել եւ հանգիցել ի վերայ Ձեր, ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԷՈՐԳ Զ.

Ցուաւ կոնդակս ի 20-ն դեկտեմբերի

1946 ամի Փրկչական

Ի թմարիս Հայոց ՌԶԴ

Յերկրորդում ամի Հայրապետութեան Մերոյ

Ի Ս. Էջմիածին

ԲԻՒՐ ՈՂՋՈՅՆ, ԵՐԿԱՐ ԿԵԱՆՔ

ԱՆՋՈՒԳՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ — ԶԵՐՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ,
ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆ, ԱԼԵՋԱՐԻ ՑՈՒԵԼԵԱՐԻՆ,

ՈՂՋՈՅՆ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՈՒ ԵՐԿՆԱՄԵՐՁ ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՑ
ՀԻՆԱԻՈՒՐՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ

Այսօր տօն է խնդուլի, Սիրիայի եւ Լիբանանի հայ հասարակութիւնը այսօր տօնում է հանուրի համակրանքին արժանացած մեր աւագագոյն եկեղեցականներին մէկի՝ Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին Շնորհազարդ Կաթողիկոս Յովսէփեանի քահանայութեան 50-ամեայ, եկեղեցական, գրական, գիտական գործունէութեան 60-ամեայ եւ ծննդեան 80-ամեայ պանծալի յօրեկանը:

Փառայել կեանքի ուղի է անցել Վսեմաշուք Յոբելեարը, կեանքի Մարդը, խօսքի, գրչի շնորհալի Վարպետը:

Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանը Հայ եկեղեցու եզակի դէմքերից մէկն է հանդիսանում, եզակի իր եկեղեցաշինարարական, հայրենասիրական, գրական-գիտական գործունէութեամբ: Նրա անունը ծանօթ է ոչ միայն հայրենիքին ու հայկական գրիթէ բոլոր գաղութներին, այլ եւ օտարագոյն հասարակական ու գիտական շրջաններին: Որպէս առաքինի ու շիտակ եկեղեցական, որպէս առողջ մտքի ու լայն սրտի տէր անձնաւորութիւն, նա վայելում է ոչ միայն հայերի, այլ եւ բարեկամ ժողովուրդների սէրն ու համակրանքը:

Մեծ է նրա աւանդը Հայ եկեղեցու բարգաւաճման եւ հայ արուեստի, մշակութի, պատմութեան ուսումնասիրման գործում:

Տասնեակ տարիներ անձնուիրաբար սպասարկել է նա Հայ եկեղեցուն, մեծ ծառայութիւններ մատուցելով նրան: Նրա եկեղեցաշինարարական գործունէութիւնը չափազանց ընդածափ հորիզոններ է ընդգրկել, սկսած Ս. Էջմիածնից, Քիֆլիսից, Նոր-Նախիջևանից, Դրիմից մինչեւ Միջին ու Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի եւ Նոր Աշխարհի երկրները: Ամենուրեք, ուր այցելել է նա, Հայ եկեղեցին փայլել, նոր վերելք է ապրել:

Սակայն Գարեգին Կաթողիկոսը ոչ միայն ջերմեռանդ եկեղեցասէր է, այլ եւ ջերմ հայրենասէր: Նրա մօտ եկեղեցասիրութիւնն ու հայրենասիրութիւնն անբաժան են: Ղարապաղի սիգապանծ լեռների այս կորովի զաւակը իր արծուային թռիչքով ընդգրկել է աշխարհի գրեթէ բոլոր հայաբնակ վայրերը: Նա այցելել է աշխարհի այն բոլոր անկիւնները, ուր հայութեան բնկորներ կանափուռած եւ իր զգայացունց ճառերով, քարոզներով յուսադրել, հայրենիքի սիրով ջերմացրել նրանց հայրենաբաղձ սրտերը, հայրաբար սփռիւն վշտերը:

Նա խօսքի մեծ վարպետ լինելով գիտէ արագօրէն գրաւել իր ունկնդիրների սրտերը, մեծ արուեստագէտի հմտութեամբ շօշափել նրանց հոգու թրթռուն, նուրբ, գերզգայուն լարերը, պահել նրանց հոգեզմայլ, յափշտակուած վիճակում, իր դիպուկ, նպատակասլաց բառերով ալեկոծել նրանց ներաշխարհը, ներշնչել վսեմ ու ազնիւ գաղափարներ: Նա իր ունկնդիրներին թոյլում, գերում է իր ցափազանց պարզ, վճիտ, սրտագրաւ, հոգու խորքից յորդող անկեղծ խօսքերով. իր խօսելու ամբողջ տեւողութեան պահերին նա կարողանում է ոչ միայն մագնիսացնել, լարուած վիճակում պահել իր ունկնդիրներին, այլ եւ տիրաբար իշխել նրանց զգացմունքների վրայ: Իր հայրենաշունչ ճառերով նա հայ ժողովրդի աստանդական զանգուածները միշտ էլ խանդա-

վառել է հայրենասիրութեամբ, բորբոքել նրանց հոգու խորքում անմար պահուած հայրենիքի սիրոյ կայծերը, հրդեհել նրանց սրտերը հայրենիքի սիրով: Ուր որ եղել է նա, Արարատի նուիրական փէշերից սկսած մինչև Խաղաղականի ափերը, Իրանի սահմանափակ մինչև Նեղոսի հովիտը, Եւրոպայի երկրներէց մինչև Միջագետքի երկրները, ամենուրեք ու ամէն տեղ հայ ժողովրդի աստանդական բնկորներին կոչ է արել արեւածաղկի նման երեսով դարձած մնալ դէպի Արարատի ստորոտում ծաղկող հայրենիքը, դէպի թանկագին Սովետական Հայաստանը, որ հայ ժողովրդի «կենդանութեան արեւն է»: յորդորել է աչքը պահել «ուղղած մեր Հայրենիքին, Սովետական Հայաստանին, սիրել նրան սրտի ամբողջ էութեամբ»: Ու ինքն էլ իր ամբողջ էութեամբ սիրել է հայրենիքը, ոգեշնչուել նրա յարանուն վերելքով: Հայրենիքից հեռու, բայց միշտ հայրենիքի հետ. Փարիզում թէ Նիւ-Եորքում, Եգիպտոսում թէ Կիպրոսում, Անթիլիասում թէ Դամասկոսում ու այլուր, ելոյթների թէ մենութեան պահերին նրա աչքերի առաջ միշտ ուրուագծուել ու բարուագծուել են խրոխտ ու վհասաբան Արարատները, քառագագաթ Սրագածը, բարձրագահ Սեանը եւ իր երբանիկ կեանքը կերտող տաղանդաւոր հայ ժողովուրդը: Եւ նրա ականջներին ղեռ հնչում է Մայք Տանարի զանգերի ղօզանքը:

Իսկ երբ իրականացան հայ ժողովրդի վտարանդի զաւակների, ինչպէս եւ Գարեգին Կաթողիկոսի, իղծերը ու հայ ժողովրդի պանդուխտ որդիները կարաւաններով հայրենիք էին ֆրանսպարհում, 80-ամեայ բոցաշունչ հայրենասէր Կաթողիկոսը հանգիստ չգիտէր. նա շրջագայում էր ամէն տեղ, կազմակերպում ներգաղթը, հայրենադարձի կարանները մէկկի մէկիկ նաւահանգիստ առաջնորդում, ողջերթ մտղիւմ նրանց:

Գարեգին Կաթողիկոսը, նշանաւոր եկեղեցական լինելուց զատ, զրական անխնայ մշակ, մեծահամբաւ գիտնական է ճանդիսանում: Մի ձեռքում խալը, միւսում գրիչը, այսպէս է եղել նա. նրա մօտ եկեղեցական գործունէութիւնը միշտ զուգորդուած է եղել զբաղան-գիտական գործունէութեան հետ: Մենք Գարեգին Կաթողիկոսին ճանաչում ենք ոչ միայն որպէս սոսկ նշանաւոր եկեղեցական անձի, այլ եւ որպէս հայ արուեստի, մշակոյթի, պատմութեան քաջածանօթ, լաւատեղեկ գիտնականի, որպէս պատմաբանի, հնագէտի, բանասէրի, մատենագրի:

Նրա բեղմնաւոր գրչին են պատկանում, բազմապիսի խնդիրների նուիրուած, հարիւրից աւելի ուսումնասիրութիւններ, որոնք լոյս են տեսել զանազան պարբերականներում եւ չորս տասնեակի հասնող առանձին գրքերով լոյս տեսած կամ ճրատարակութեան համար պատրաստ աշխատութիւններ. դրանք պատմական, հնագիտական, բանասիրական, մատենագրական, արուեստագիտական բնոյթ են կրում. դրանցից մի քանիսը բազմահատոր, ստուարածաւալ աշխատութիւններ են ներկայացնում, մեծ մասամբ նուիրուած հայ արուեստի, մշակոյթի ուսումնասիրութեանը:

Ո՛վ կարող է հաշուել, թէ այս անխնայ գիտնականի ձեռքերը քանի հազար ձեռագրեր են շոշափել ու մատնել քանի հազար մագաղաթի ու թղթի թերթիկ թերթիկ, քանի հազար ձեռագրերի վրայ իւր գլուխ է խոնարհել, տքնաքան աշխատանք թափել, Հայ ձեռագրերի քայ մեծ սիրահարը հանգիստ չգիտեր, մինք նրան տեսնում ենք եւ Էջմիածնի եւ Երուսաղէմի մատենադարաններում, եւ Լենինգրատի Էրմիտաժում, եւ Պետրիքի, Փարիզի, Նիւ-Եորքի, Վենետիկի, Վիննայի ու այլ բազմաթիւ մատենադարաններում:

Ամէն տեղ նրա հետախոյզ միտքը պրպտումներ, որոնումներ, վերլուծութիւններ, համադրութիւններ կատարելով վերստին կեանքի էր կոչում, կեանքի ազդեցիկ շնորհում մեր արժանաշիշատակ նախնիների մոռացութեան մատնուած, հնադարեան փոշով ծածկուած գործերին: Զեռագրերի աշխարհը Գարեգին Կաթողիկոսի կեանքի տարրերն են կազմել. նրան յաճախ կարելի է տեսնել շրջապատուած ձեռագրերով. կարելի է ասել, գրեթէ բոլոր հայ ձեռագրերի վրայ նրա մատների հետքերը կան դրօշմուած:

Սակայն Գարեգին Կաթողիկոսը իր առանձնաբանում փակուել, մենանալ ու միշտ

ծեռագրերի ծովում ընկղմուել չգիտեր. նա առանձնարանով ու մագաղաթի եւ թղթի թանկագին ձեռագրերով սահմանափակուող գիտնական չէր. նա սիրել է շրջագայել ու կարողալ հայ բնաշխարհի լեռնահովիտներում ու լեռնակատարներին առատութեամբ սփռուած անխիար ու անհամար «գրքերը» — վանքերի, մենաստանների, եկեղեցիների, տապանաքարերի, խաչքարերի, հնադարեան յուշարձանների վրայ եղած արձանագրութիւնները: Ո՛վ կարող է հաշուել, թէ քանի ճազար արձանագրութիւնների առաջ է կանգնել նա ժամերով, ուսումնասիրել, վերծանել, քանի հազար տապանաքարերի, խաչքարերի վրայ կռացել, վանքերի, մենաստանների, եկեղեցիների, աւերուած բերդերի, քաղաքների մնացորդ բեկորների վրայ տընել. հնութեան ամէն մի բեկոր, ամէն մի քար չի վրիպել նրա ուշադրութիւնից: Այցելել է նա անդնդախոր կիրճերում, անմատչելի ժայռերի կատարներին, մթին անտառների թաւուտներում ու լեռնածերպերին առանձնացած հին ու նոր, շէն թէ կիսաւեր վանքերն ու մենաստանները, դարերի մամուռով զգեստաւորուած հինաւուրց յուշարձանները: Այսպէս է աշխատել նա, վկայաւորելով ու ակադէմիկով ոչ միայն ձեռագրերին, այլեւ քնութեան յուշարձանների խօստուն բեկորներին, որոնք ճշմարտացի վկաներն են հանդիսանում մեր անցեալի պատմութեան: Նրա անվերջ պրպտող, վերլուծող, բաղդատող միտքը այս ճանապարհով կարողացել է անսպառ նիւթ կուտակել հայ արուեստի, մշակոյթի, պատմութեան վերաբերեալ: Նրա խորթափանց հայացքի տակ շունչ ու լեզու են առել քարի բեկորները, շատ բան պատմել մեր նախնիքների փառաւոր անցեալի մասին: Նրա մոգական զրփ տակ վերակենդանացել, նոր փայլ ու արժէքաւորում են ընդունել մեր հնութեան մշակոյթի յուշարձանները, մոռացութեան մատնուած շատ հոյակապ կոթողներ: Նրա ուսումնասիրութիւնների, այցելութիւնների հետեւանքով հայ մշակոյթի շատ արժէքներ են փրկուել կորստեան վերահաս վտանգից: Գրքերի փոշու տակ թաղուած, անուշադրութեան մատնուած բազմաթիւ ձեռագրեր եւ մամուլագատուած ու անգիտութեան հետեւանքով ոչնչացուող անհամար յուշարձաններ նրա շնորհիւ ժողովրդի խնամքի ու գուրգուրանքի առարկայ են դարձել:

Մեծ է նրա աւանդը հայ արուեստի ուսումնասիրութեան բնագաւառում: Հայ գրչութեան արուեստի եւ յատկապէս հայ մանրանկարչութեան ուսումնասիրութիւնները բացառիկ տեղ են գրաւում նրա աշխատութիւնների փայլուն շարքում: Հայ մանրանկարչութեան պատմել տեղ ունի արժանաւոր տեղն է գրաւում: Հայ մանրանկարչութեան արուեստի ուսումնասիրութիւնը սերտ կերպով կապուած է Գարեգին Կաթողիկոսի անուան հետ. եթէ Կոմիտասը յայտնագործեց հայ երաժշտութիւնը, Քորամանեանը հայ ճարտարապետութիւնը, Գարեգին Կաթողիկոսն էլ յայտնագործեց հայ մանրանկարչութիւնը: Բայց այս եռեակի մէջ ամենաբախտաւորը հանդիսացաւ Գարեգին Կաթողիկոսը, որովհետեւ նրա երկար տարիների տնայրան աշխատանքի պտուղները կորստեան չմատնուեցին, մինչդեռ ինչպէս գիտենք, Կոմիտասի հաւաքած մի քանի ճազար երգերը եւ Քորամանեանի տաքանակ տարիների աշխատանքի արդիւնք հանդիսացող նիւթերի մեծ մասը կորել եւ անդարծ, երկու դէպքում էլ թրքական վայրագութիւնների հետեւանքով:

Ի սրտէ ցանկանում ենք մօտ ապագայում աւարտուած ու տպագրուած տեսնել Գարեգին Կաթողիկոսի Հայ մանրանկարչութեան գունազարդ քարտէսը հոյակապ գործը, ինչպէս է նրա միւս գործերը:

Երկար կեանք ու առողջութիւն ենք մաղթում մեր աշխատ. Յոբելեարին:

(Խմբագրական Ս. ԷՄԻԱՄԻՆ Ամսաբերի,
1947 Յունուար-Փետրուար միացեալ թիւին)

այդ նուիրական նպատակին առջև եւ անոր սիրոյն ոչ մէկ զոհողութիւն խնայել կ'ուզէ: Պիտիք ընէ՝ նոյնիսկ այն ինչ որ իր վայրը բոսած է իրեն համար, պիտի փրցնէ իր ճակտին դրուած պատկերներուն բոլոր արժէքները եւ պիտի զոհարեւէ այդ գործին:

Երբանիկ է Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռը իր Ուխտանուէր Միաբանութեամբ եւ իր թեմի բոլոր գաւազններով, որ առիթը պիտի ունենայ Յոգեմանական Հանգիստութիւններով մեծարելու Նորին Սրբութիւնը:

Մեր այս երջանկութիւնը վատահ ենք իր մեծագոյն մխիթարութիւններէն մին պիտի դառնայ վասնզի Հայրենիքէն դուրս ուրիշ ոչ մէկ տեղ այնքան մօտիկ կը գտնուի իր հոգիին եւ իր սրտին որքան Սուրբ Երուսաղէմը եւ Հայ Երուսաղէմը իրենց կրօնական ներշնչումներովը, իրենց ազգային եկեղեցական յիշատակներովը եւ արժէքներովը:

Նորին Սրբութեան սրտի այս մեծաւարութիւնը խորապէս զգացուած ու յարգուած է միշտ Երուսաղէմի մէջ եւ քնական է որ իր կաթողիկոսութեան օրով Կիլիկիոյ եւ Երուսաղէմի Աթոռներու զարաւոր բարեկամական յարաբերութիւնները պիտի ըլլան աւելի քան երբեք սերտ եւ համերաշխ, իրենց նուիրապետական ուրոյն կարգ ու պարք պահելով հանդերձ: Անոնք այլեւս իրենց Հայաստանիայց Եկեղեցւոյ եւ Ազգի երկու դրացի հոգեւոր եւ իմացական կեդրոններ իրենց հաւատարմութեամբ եւ խտէլով միադնական, պէտք է գործեն ձեռք ձեռքի Մեծաւոր Արեւելքի հայութեան ազգային յառաջդիմութեան՝ հոգեւոր եւ մտաւոր արագեցումն մէջ:

Անցեալ Վեժ Գառնիւրովի արհաւիրքներէն վերջ, Երուսաղէմի Աթոռի զոհարելութիւնները ի նպատակ Կիլիկիոյ Աթոռի վերահաստատութեան եւ զօրացման, անգերազանցելի կը մնան ըստ ամենայնի: Թուական եւ այլ պայմաններու համեմատութեամբ, նոյնը կարելի է ըսել Ս. Երկրի մեր թեմերու նիւթական օժանդակութեան համար ի նպատակ Լիբանանի զանազան ազգային հաստատութիւններու:

Երուսաղէմի Աթոռը այս ոգեւոր պիտի շարունակէ իր ջանքերը վասնզի համոզուած է թէ Կիլիկիոյ Աթոռին առաքելութիւնը, Մայր Աթոռին հետ ունեցած իր ներկայ կապերով, աւելի քան երբեք անհրաժեշտ է՝ Կիլիկիան հայութեան ապագան երաշխաւորելու համար:

Այս զգացումներով եւ համոզումով Նորին Սուրբ Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ մեր ամենախորին շնորհաւորութիւններն ու յարգանքները կը նուիրենք Հայաստանեայց Եկեղեցւոյ այն Շնորհազարդ Հայրապետին եւ Մեծ Վարդապետին, որ յիսուն տարիներ շարունակ՝ հաւատարմով իր քահանայական կոչումին եւ ուխտին խաչ՝ ի ձեռին իր առաքելական քրիստոսաւանդ պաշտօնները կատարած է՝ հաւատացեալներու հոգիներու փրկութեան եւ բարոյականի զարգացման համար: Որ վաթսուն տարիներ, իր հոգեւոր պաշտօններուն հետ առնչներ, իր ժամանակի եւ ոյժերուն մեծ մասը զոհարեցած է հայ բանասիրութեան, հազարաւոր ձեռագիրներ եւ արձանագրութիւններ, կոթողներ ու քանդակներ յուսմամբսիրած եւ Հայ ժողովուրդի անցեալ վիտաքի եւ մշակոյթի պատմութեան թանկագին նպաստները բերած:

Օրհնութիւն եւ զոհութիւն կենաց եւ շնորհաց յաւիտեանական Արեւիքին որ իր օծեալ գաւազնի պարգեւած է ութսուն պտղաւէտ տարիներ փառաւորելու իր եկեղեցին:

Կ'աղօթենք որ Նա իւր կենսատու պարգեւները առատապէս ցօղէ Նորին Սրբութեան քրեշտակային անթաւաճ կեանքին վրայ որպէսզի բարեբախտութիւնը ունենայ ի կատար ածելու իր վաստակին ճոյակապ շէնքը ամբողջութեամբ, եւ ապահովէ իր հոգեւոր դպրանոցը եւ աթոռաշէն առաջադրութիւնները:

Կը մաղթենք որ Կիլիկիան Աթոռին հոգեւորական դասի բոլոր անդամները որդեկան եւ հաւատարմական ամենազինով զգացումներով եւ գիտակցութեամբ զօրավիգ հանդիսանան Նորին Սրբութեան իր կեանքի ամենահրաշառայ եւ կենսալից այս շրջանին:

Շնորհակալութիւն բոլոր անոնց որոնք իրենց խօսքով, գրիւով եւ նուիրաւորութիւններով պատուելցին եւ պիտի պատուեն Մեծանուն Յոգեմանը, որուն մատուցուած ունեւ պատիւ՝ պատիւ է Հայութեան, Հայաստանեայց Եկեղեցիին, Հայ Գրականութեան, Հայ Մշակոյթին, անոր հոգեւոր, բարոյական եւ իմացական ամբողջ կառուցուածքին:

ԿԵՐԵՂ. Բ. ՊԱՏՐԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՅԱՓԱՌ ՅՈՐԵԼԵԱՐ

Ս. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութիւնը և անոր Ամեն. Գահակալը խորունկ հաճոյքով է որ իրենց յարգանքին և սիրոյն տուրքը կը բերեն Նուրիս Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի, Յորելիական այս հանդիսաւոր մեծարանքին մէջ:

Հանդիսաւոր զիտակցութեամբ և հրճուանքով, հայ ժողովուրդը, Ամբիւկայէն մինչեւ Եզրպատոս և Սիւրիայէն, Լիբանանէն մինչեւ Կիպրոս և Պաղեստին՝ իր յարգանքի և սիրոյ մեծ բաժինը բերաւ և պիտի բերէ հայ մշակոյթի այս մեծ վաստակաւորին և զմայլելի եկեղեցականին, որ ոչ միայն մեր՝ այլ այժմու բովանդակ քրիստոնէական եկեղեցւոյ հաղուազիւտ մեծերէն մէկը կը բնայ նկատուիլ ապա՛ով հպարտութեամբ:

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսը ոչ միայն մտաւորական ընտրանիի մը, այլ նաեւ իր անբասիր նկարագրով, արդիւնաւոր զործունէութեամբ, և իր անձին ներշնչած պատկառանքով՝ առարկայ է այսօր բովանդակ ազգին անսահման յարգանքին, հիացման ու սիրոյն: Իր վրայ կը փայլին՝ ակնախտիլ շքանշաններու պէս՝ ձիրքեր, որոնց գուգակչիւրը դժուար է քննել, և որոնցմէ իւրաքանչիւրը կրնար նշանաւոր հանդիսացնել որ և է անհատ Հոգեկան կեանքի ճշմարիտ կոչում ունեցող մը, բարոյական մարդ մը, բազմահմուտ պատմաբանասէր մը, զրազէտ մը, արուեստագէտ մը, աննման քարոզիչ մը և նոյն ժամանակ անդուլ և անյազ ուսանող մը, միշտ ի խնդիր հետազոտութեանց մեր անցեալ արժէքներու, ընդարձակ դաշտին վրայ անոր փոփոխութեանց մեր անցեալ արժէքներու, ծովէն վերբերելու հայ հոգին կազմող շիներէն, մութերէն և աւերակներու ծովէն վերբերելու հայ հոգին կազմող տարրերը: Երբ կը կենանք Վեհափառ Յորելեարով պայմանաւոր այս արդիւնաւորութիւն քննելու, մեր միտքը կ'երթայ այդ բոլորը կարելի ընող, ի մի ձուլող և շքեղօրէն պրիմալիոյ մարդուն, աննմաւորութեամբ: Շքեղ է այդ աննաւորութիւնը, ու կարելի չէ չհիանալ զայն բարացուցող ու կազմող մտքի և հոգիի ուժերուն առջեւ:

Յետադարձ ակնարկ մը իր կենքին ու զործունէութեան վրայ, կրնայ ցոյց տալ արդարեւ այդ աննմաւորութիւնը՝ իբր հոգեւորական, իբր զրջի մարդ, իբր բնի մարդ և վարչական զործերու խանձանձիչ: Իր եկեղեցական ասպարէ-

զին առաջին սանդղամատին վրայ իսկ՝ ուշագրաւ կը դառնայ Վենը զրական և մանաւանդ բանահաւաքման և պատմական աշխատութիւններով: Անհուն է իր վաստակը, նուիրուած մեր հնագիտական արժէք ներկայացնող վայրերու ու սուճասիրութեան, մեր ձեռագիրներու և մանրանկարներու մանրակրկիտ ու հմուտ պրպատումներուն: Ձենք դներ հոս ցուցակը իր գործերուն, հրատարակուած և անտպ, որոնց թիւը քանի մը տասնեակ հատորներու կը հասնի: Վեհափառ Յորելեարը մեծ ու բազմաբեղուն դէմք մըն է մեր արդի պատմագիտութեան, բանասիրութեան և զրչութեան ու յարակից արժէքներու կալուածին մէջ: Իր բովանդակ կեանքը նուիրուած է այդ արժանիքներու վերբերման, որոնց ոչ միայն քանակը այլ մանաւանդ որակը ծանրակշիռ է ու պատկառելի: Հասկընայու համար ատիկա պէտք է ճանչնայ անվիատ աշխատութեան, ջերմ հաւատքի և մեր արժէքներուն համար իր ունեցած պաշտանքին չափը: Աստուծոյ և ազգին գերազանցապէս նուիրուած կործիչի այն հոգին, որ տարիներու անձանձաւոյթ փոյթի, խորիմաստ թափանցումի և աննահանջ խուզարկողի խորհրդանիշ անձնաւորութիւնը պիտի ընէր նորին Վեհափառութիւնը: Իր խորին համոզումն է, թէ Աստուած մեր մեծ ու երջանիկ նախնեաց կեանքով սքանչելի գործեր, հրաշքներ կատարած է մեր անցեալին մէջ, իր ճակատագրին բարձրութեան վրայ բռնելու համար մեր ազգը, ու պատմական անդրադարձումներուն իր մեծագոյն ճիշդ եղած է ցուցնել այդ խորհուրդը:

Իր խօսքովը, իբր խանդավառ ու ընտիր քարոզիչ, նորին Վեհափառութիւնը յատնաբերած է ինքզինքը իբր կրօնական մաքուր զարգացման ներշնչումի մարդը ի յայտ եկած մեր եկեղեցական բեմէն և ազգային ամպիրոններուն վրայ: Իր հետորութեան յատկանիշերն են պարզութիւն, ջերմութիւն և թոխչք: Պարզ են իր խօսքերը, որովհետեւ յստակ է իր մտածումը, ջերմ են իր արտայայտութիւնները՝ որովհետեւ հաւատքին հուրը կայ իր հոգիին խորը, թեւ ունին իր մտածումները, որովհետեւ կողան մեր շքեղ անցեալէն և մեր ժողովուրդի սրտառուչ ու մեծ արժանիքներէն: Խօսքն ու գիրը սաւկայն կենդանի ուժեր կը լինին մարդու մը շրթանց վրայ և մտանքներուն ներքեւ, երբ անոր անձնաւորութեան մէջ ստուգապէս կենդանի է հոգին, առանց այդ հոգին չի կրնար եռալ կաթսան:

Իր զրական, հնագիտական և բանասիրական ընդարձակ վաստակէն դուրս, նորին Ս. Օծութիւնը զանազան առաքելութիւններով ճամբորդած է բոլոր ուստաններ. այս աշխարհամասերուն վրայ իր վերջին շրջանը ըրաւ 1934ին, իբրև լիազօր նուիրակ և ներկայացուցիչ Ամենայն Հայոց Հայրապետի: 1938 Սեպտ. 4ին Ամերիկայի Ազգ. Երեսփոխանական Ժողովը, հակառակ իր կամքին զինք կ'ընտրէր Առաջնորդ Ամերիկահայութեան: Հոս իր կազմակերպչական, կրթական և կրօնական աշխատութիւնները փրկարար դեր մը ունեցան պառակտուած այս գաղութին մէջ, իսկ 1943ին Կիլիկեան թեմերու Ազգ. Ընդհ. Ժողովը միաձայնութեամբ զինքը Կաթողիկոս կ'ընտրէր Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին:

Ահա այս կարգի անստղծ արժանիքներով անձնաւորութիւն մըն է Յորելեարը Հայրապետը: Եկեղեցական մը՝ որ աւելի քան վաթսուս տարիներ ծառայած է իր ժողովուրդին՝ գրով, խօսքով ու գործով, իր կոչումին և դերին արժանաւայել գիտակցութեամբ, որ «սակաւ ընտրեալներու» առանձնաշնորհն է միայն:

Ձմռանանք հոս մատնանշել թէ Յոբելյանական հանդիսութիւնները իրենց արդիւնքներով կը ձգտին շատ աւելի անդին քան յարգանքի սովորական արտայայտութիւնները, քանի որ անոնց արդիւնքը կոչուած է փոխուելու մեր ժողովուրդին անսպառ մէկ հարստութեան ընդմիջտ կորուստէ ազատութիւն։ Կ'ակնարկենք Վեհափառին գրական վաստակին հրատարակման կարելիութեան։

Երկու տարիներէ ի վեր Նորին Վեհափառութեան ներկայութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին վրայ, այդ Աթոռը ոչ միայն իր բարոյական հմայքին և կարելի արդիւնաւորութեան մէջ վեր բռնած է, այլ զայն տակաւ տնտեսական կացութեան մըն ալ տանելու աշխատանքներուն է լծուած Վեհափառը։ Կիլիկիոյ տարագիր Աթոռը շնորհիւ իր նախորդներուն ու մանաւանդ Նորին Վեհափառութեան հեռահայեաց ճիգերուն, մօտ է ըլլալու մշակոյթ մը, ամբողջական կատար մը, կաթողիկէ մը հայ հոգիին վրայ։

Ու այս բոլորը զալու համար իր մեծ անձնաւորութեամբ տիրական հմայքին, որուն շողարձակումներն են ինչպէս ըսինք իր արժանիքները և անոնցմով պայմանաւոր իր արդիւնքները։

Անձնաւորութիւնը՝ խորհող և բարոյական մարդն է, որուն մէջ անձին խորագրաց գիտակցութիւնը այնքան ուժեղ է և բարձր, որքան աւելի բացուած և լուսաւորուած է իր մէջ անձնիշխանութեան և պատասխանատուութեան ըմբռնումը։ Վեհափառ Յոբելեարին մեծագոյն յատկանիշներէն մին է ազնուագրաց վստահութիւնը թէ պատճառ մըն է ինքը՝ որ ծնունդ պիտի տայ մեծ և բարի գործի։ Ու, օժտուած՝ գերագանց կորովով մը, կը քակէ իր մտային կեանքը բազկացնող իրողութիւններուն հիւսքը, անոր մէջ ընդմուծելու համար զազափարը գործի մը, որ, յետոյ պիտի լինի սկզբնաւորութիւնը շարք մը արդիւնքներու, որոնք պիտի գոյութիւն չունենային առանց իրեն։

Արդարութիւնը հատուցած պիտի ըլլանք արդարեւ թէ՛ պատմական և թէ՛ բարոյական ճշմարտութեան, անվարան ընդունելով թէ Մեծի Տանն Կիլիկիոյ արդէ Աթոռակալը Տ. Տ. Գարեգին Վեհափառ Յոբելեարը, հոգեբանական այս կարգի տուեալներու վրայ կանգնած անձնաւորութեան մը պատկերն է որ ի յայտ կը բերէ իր բովանդակ կեանքովն ու նկարագրովը։

Կարելի չէ, կ'ուզէինք ըսել այս էջերուն սկիզբը, ընթացիկ այս խօսքերով կշռել իր արժէքը. այսինքն ներս մտնել իր անձէն՝ լոկ գիտական տրուեալներու ճամբով. վստիկ որ և է արժանիքէ աւելի՝ հոգիի մարդու արժանիքն է որ կը շեշտուի իր վրայ։

Նա՛ է հոգիի մարդը, որուն մէջ աստուածայինն ձգտումը կենդանի ոյժի մը փոխարկուած է, որուն մէջ հաւատքը սիրոյ կը վերածուի կեանքի հարկադրած մեծ պարտականութեանց առջև. Սէր՝ որ զիւցագնութիւն կ'ըլլայ կամքին մէջ, և հանճար՝ ուղեղին խորը։ Սիրոյ վերածուած այդպիսի Հաւատքի գործօն առաքեալի՝ այսինքն բուն հոգևոր մարդու ամենէն զմայլելի տիպարներէն մին է արգարե Վեհափառ Յոբելեար Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիոյ։

Պատուելով այս հոյակապ հոգևորականը, ազգը ինքզինքն է որ կը պատուէ։

ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿ ԾՆՆԴԻԵԱՆ

ԵՒ

ՅԻՍՆԱՄԵԱԿ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԼԻԿԻՈՅ

Նորին Ամենապատուութեան Պատրիարք Ս. Հօր եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան փափաքով եւ նախաձեռնութեամբ իմ Նորին Ս. Օծութեան հանձնարարքով, կարգադրուեցաւ Ս. Արքուդոս հովանիին տակ եւ Պաղեստինի Երջակայ թմբուրուն մէջ, Եւֆրատ, Հայֆա եւ Ամման. տօնելու Նորին Վեհապառուրթեան Յոբելեանը, օգտուելով Վեհ. Հայրապետի ներկայութեան մեր մէջ:

Այս նպատակաւ Երուսաղէմի մէջ կազմուեցաւ Յոբելիական Կեդրոնական Յանձնախումբը՝ նախապատուութեամբ Նորին Ամենապատուութեան Պատրիարք Ս. Հօր:

ՅԱՆՁՆԱԿՈՒՄԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

ՅԱՆՁՆԱԿՈՒՄԱՆ

- Նախագահ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայր
Առաջնորդ. — Տօք. Վ. Գալպիեան
Առաջնորդիչ. — Տ. Եղիշեկ Վրդ. Տեղաբնակ
Խորհրդակց. — Տ. Սեբուլքե յ Մանուկեան
Գանձապահ. — Պ. Կարապետ Բաղդասարեան
Անդամ. — յ Կարապետ Ղազարեան
» Յիլիպ Տեղաբնակ
» Աբգար Պեհնեան
» Խմաստուն Կիլիկիական

Կեդրոնական Յանձնախումբը ի Պատրիարքարան գումարած իր առաջին նիստին մէջ ընտրեց նոյնպէս Յոբելիական Գեղարուեստական Յանձնախումբ մը՝ բաղկացած հետեւեալներէ.

Տիարք

Վահան Ղազարեան
Թարուրիւն Այվազեան
Իմաստուն Կիլիկիական
Մուրաթ Մանուկեան
Հայկազ Մխալեան
Նուպար Արսենեան
Յովհաննէս Շեփակեան
Կարապետ Նապեան

որոնք զբաղեցան Յայտագրի պատրաստութեան, հրաւիրագիրներու առաքման եւ հանդէսի օրուան կարգապահութեան հսկելու գործով: Նշանակեց նոյնպէս նուիրահալալ չորս յանձնախումբեր բաղկացած հետեւեալներէ.

Վահան Գեղ

Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան
Տիար Սարգիս Պալեան
» Աւետիս Սաննեան

Պաղտապետ Բաղ

Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քեմհանեան
Տիար Աբգար Պեհնեան
» Յակոբ Պեհնեան
» Վահան Աղաբեկեան

Շուկայի մէջ

Հոգ. Տ. Թարուրիւն Աբգ. Մուսեան
Տիար Ոսկան Սանապեան
» Նիկողոս Զաքարեան
» Միքայիլ Ոսկերիչեան

Պաճա-Գործարմուն եւ Թալպիէ

Հոգ. Տ. Միւռնոն Վարդ. Կրնիկեան
Տիար Կարապետ Քաջապետեան
» Պետրոս Պալեան
» Իմաստուն Կիլիկեանեան

Առաջին մեծ հանդէսը օրոշուեցաւ կա-
թաբէկ երուսաղէմի մէջ 17 Օգոստոս 1947,
իսկ Յամալայի, Հայֆայի եւ Ամմանի բնակե-
րուն մէջ Օգոստոս 24 եւ 31-ին, ի ներկա-
յութեան Վեհափառ Յոբելաւորին:

ՅՈՐԴԱՆԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

17 Օգոստոս 1947 երեկոյեան ժամը 5ին
երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի
սրահին մէջ, ի ներկայութեան ընտելալ եւ
կոկիկ բազմութեան մը, օճուեցաւ Յոբելա-
ւորական առաջին հանդէսը:

Հոգեւորական կը գեներալիս օրուան բա-
նախօսութիւններու ամփոփոյր:

Յանուն Յոբելիկեանի Կեդրոնական
Յանձնաժողովի հանգիստ բացաւ Ասենապետ
Տօթ. Վ. Գալպիեան, նետեալ գեղեցիկ
խօսքերով:

Նիւ Յորքի մէջ, հրեաները Աստուա
ծարանական ճիւղերն ունեն, որուն հո-
յակազ մուտքին ճակատը փորագրուած է
բոցավառ մորեկին մը, ստորեւ գրուած
«Կը վառի շայն չ'ալիր» իտալիացի
մողութիւնը, հակառակ դարաւոր հայա-
ծանքներուն եւ բիրաւոր ջարդերուն՝ բընա-
լինջ եղած է, եւ հրեաները հպարտու-
թեամբ իրենց ցեղը կը նմանցնեն Ռաֆայէի
տեսած բոցավառ մորեկին. «Կը վառէր,
բայց չէր այրուեր, չէր փոշիանար, չէր
անհետանար»:

Պատկերը գեղեցիկ է:

Սահայն որքան աւելի գեղեցիկ, որ-
քան աւելի վեհ եւ ներշնչող է պատկերը
Լուսաւորչի կանթեղին, որ այնքան յա-
ղոզութեամբ արտասանուեցաւ քիչ առաջ:
Նստուած իր ձեռքերով վառեց այդ կան-
թեղը եւ Հայաստանի երկինքէն կախեց,
լոյս տալու հայ աշխարհին եւ յոյս ներ-
շնչելու թոյլ եւ կասկածոտ սրտերու:
Անոր մէջ, փոխան իւզի, սուրբերու մա-
քուր արցունքը գրաւ. ամենաստուկայի փո-
թորիկներն ու ամենէն անշը քամիներն
անգամ՝ անգոր են գայն մարելու. անշէլ
է ան եւ մշտապաւ: Եւ, այդ կանթեղին

կը նմանցնէմ Հայ ցեղը, խաւարակու-
նաւոր մէկ անկունը, լոյս սփռելու իր
շուրջը: Դարձուցէք պատմութեան էջերը,
վերջիչելու համար այն կատաղի փոթորիկ-
ները եւ այն ամենի քամիները որոնք գա-
րեաւ ընթացքին ի դուր փորձեցին շիջելու
մեր կեանքը ու քանջիջելու մեր ցեղը:
Լուսաւորչի կանթեղին նման յաբառեա-
կան է նաեւ Լուսաւորչի մողութիւնը:

Երբ 1925-ին Վեհափառ Գործակից Կա-
թողիկոս մի քանի բարեկամներու հետ Ա-
րագածի գագաթը կը բարձրանայ, այդ կան-
թեղը փնտրելու, առանձինն լեւան կատա-
րին կանգնած կը խոկայ, «Եւ է այդ կան-
թեղը. «Մունկ հմ չ'ըլլում, աղօթում, հեռ-
կեկում, «Եւ է այդ կանթեղը, ախ միւր է
հայուն լուսատու կանթեղը մշտապաւ, «Եւ
արգարներին եւ հաւատով ապրողներին է
միայն տեսնելի, եւ մեղաւոր հմ, կը
մտածէ Վեհը համեստօրէն:

Հայ մարդ ու հայ կին, կ'ուզէ՞ք տես-
նել այդ կանթեղը, մի սեւեռեք ձեր աչ-
քերը դէպի վարը, դէպի աշխարհային զեղ-
խութիւնները, դէպի երկրային ստորնու-
թիւնները եւ աղտոտութիւնները, վեր գար-
ձուցէ՞ք ձեր նայուածքը, դէպի բարձր ու
դէպի երկինքը, Նայեցէ՞ք դէպի բարին, ճշը
մարիտը, գեղեցիկը. փշրեցէ՞ք շղթաները
որ կը կապեն ձեր սիրտը Նիւթին եւ Նիւ-
թապաշտութեան, ձերբադատեցէ՞ք ձեր
միտքը անարժան խորհրդներէ ու թոյ
տուէ՞ք անոր սղանալ դէպի անհունը, դէպի
հոգեկան արժէքները, ու հոն՝ ձեր հոգիին
աշէքը պիտի տեսնեն այդ լուսատու կան-
թեղը:

Այդ կանթեղը աննիւթ է, ան հողէ կամ
ապակիէ, արծաթէ կամ ոսկիէ շինուած
չէ՞, անոր մէջ իւզ չի վառի, ան առաջ
պարանի կախուած է մեր երկինքէն՝ անոր
լոյսը բարոյական է, Լուսաւորչի կան-
թեղին է՝ անոր ճառագայթները կը հալու-
ծեն հոգիին օւ խաւարը, անոր ճառա-
գայթները կը խաբանեն թգիտութեան աղ-
ջամուղը: Ան մարմին կ'առնէ մարդոց
մէջ միայն, չէ՞ որ մարդուն հոգին երկին-
քին չ'ափ քաղծր կրնայ ըլլալ: Այդ կան-
թեղը յարգելի անկնդիրներէ արաւով
մէջ է: Այդ կանթեղը, Վեհափառ Հայրա-
պետ, գաւթ է, գուռ է ձեզ նման ուրբե-
ներ. գուռ է՞ք անոր ջահակիրքս ան ձեզ

մտքին մէջ է, ձեր սրտին մէջ է, ձեր հոգիին մէջ է. այդ կանթեղը կախուած է ձեր պերճախօս շրթներէն՝ ուրկէ կը բխին ձեր հոգեպարար քարոզները. ան ձեր մտաւնեւուն մէջ է, ձեր գրկին է, զոր վերթուն օտարի անգագար շարժեցիք ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և ի փառս Հայ դպրութեան և Հայ մշակոյթին: Դուք դայն ժառանգեցիք Ս. Սահակէն և Ս. Մեսրոպէն, դուք դայն ժառանգեցիք Թարգմաւ Նիչ Սուրբերու մեծ փառանգէն, դուք դայն ժառանգեցիք, ծանօթ և անծանօթ, հայ լեզուի և հայ գրչի բերաւոր և անձնուէր մշակներէն, անչէլ և լուսավառ, և Ձեր կեանքը ամբողջութեամբ նուիրեցիք այդ ջանք աւելի լուսավայրձառ ընելու, աւանդ ձգելով դայն ձեր աշակերտներուն:

Այս մենք այսօր հոս հաւաքուած ենք ձեզ յայտնելու մեր հիացումը, մեր սէրը, մեր որդիական յարգանքը, մեր գնահատութիւնները և մեր երախտագիտութիւնը, ձեր երբեք Թրքիւսաններուն առիթով: Մարդկայնօրէն հասկնալի է որ ութսունաւոր տարեկանը մշակի մը համար իր կեանքի վերջալոյսին հաճելի է տեսնել իր ազգանուէր գործունէութեան գնահատութիւնը, բայց ես վստահ եմ որ ձեր համեստութիւնը երբեք պիտի չթոյլատրէր այս հանդիսութիւնները, եթէ անոր նպատակը ըլլար միմիայն ձեր գործերուն գովաբանութիւնները ընել: Դուք թոյլատրեցիք այս հանգէսը զոր ձեր փառաւոր ներկայութեամբ կ'ողենորէք, որովհետեւ թէ դուք և թէ մենք համոզուած ենք որ այս պիտի հաւաքոյթներ ազգականը են արմարածելու: Հայ ժողովորդին մէջ ազգային նուիրարեցումի գլխաւ գգացումները և յարմար առիթներ են ստեղծելու համար ներթական կարելիութիւններ, որ կարենաք աւելի լայն չափով Հոռաւորի անշէլ կանթեղը տեսաւ ներք և մատչելի դարձնել նորահաս սերունդին:

Վեհափառ Տէր, կրիկեան պանդուխտ Աթոռի Լիւթաննի փէշերուն վրայ վերապանդումի մեծ գործին սկզբնական աշխատանքները, յայտնէն գետնին գնումը և շէնքերուն կառուցումը երջանկալիլաւոր Հայրապետներ Սահակ, Բարդէն և Պետրոս անձնուիրութեամբ գլուխ հանած են, մեծագոյն և գոաւարագոյն գործը, հոգեւօ-

րական և մտաւորական շէնքին կառուցումը ձեր ձեռնհաս ձեռքերուն և ձեր հմայիչ անձնաւորութեան յանձնուած է և մեր ազգային պարտականութիւնն է ամենալայն չափով ներթապէս սատարել ձեզ, ձեր ըստանձնած այս նուիրական գործին յաջողութեան և յարատեւութեանը համար: Եւրոսողէմի փոքրիկ Հայ գաղութը, ինչպէս միշտ նոյնպէս և այսօր պատրաստ է իր ազգային գիտակցութեան չափանիշը ցոյց տալու:

Երկու շաբաթ առաջ, երբ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Զօր կողմէ, Յուդիկական Յանձնախումբին անդամակցելու ինձ եղած առաջարկին ընդունած ըլլայս մեր խոնարհ յարկին մէջ յօսակցութեան նիւթ եղաւ, կրասեր որդիս Վրդէն, անմիջապէս ոտքի ելաւ և ըսաւ. «Հայր շատ ուրախ եմ որ ընդունեցիք, որովհետեւ Վեհափառը մեծ մարդ է» և աւելցուց. Տօքթ. Պ. Տաճ որ քսանհինգ տարի է ի վեր Պէյրութի Ամերիկեան Համալսարանին տնօրէնութիւնը վարած է և որ Հայ առաքապետքին և Հայուն պատմութեան մօտէն ծանօթացած է և Հայ ականաւոր անձնաւորութեանց հետ մտերմական յարաբերութիւններ մշակած է, օր մը մեզիք ըսաւ. «Վեհափառ Գարեգին Կաթողիկոսը ապրող ամենամեծ Հայն է զոր ես ճանչցած եմ ցարդ»:

Վեհափառ Հայրապետ, կ'ըսեն թէ մեծ մարդիկ չեն մեռնիր և դուք մեծ մարդ էք, և ես իրք բժիշկ ծանօթ ըլլալով ձեր առողջութեան և կենսունակութեան, մաղաթանք մը ունիմ ընելիք, այդ մաղաթանքն ոչ չափաւանցութիւն և ոչ ձեւակերպութիւն է, այլ կը բխի սրտէս: Կը մաղթեմ որ Հայ ժողովուրդը բախտը ունենայ ձեր հարիւրամեակն ալ տօնելու, ձեր ողջութեանը:

Այս յոյսով, այս փափաքով եւ այս մաղաթանքով եւ յանուն Թրքիկական Կեդրոնական Յանձնախումբին, ձեր երբեք Թրքիկաններու Պաղեստինի հանգէսները բացուած կը յայտարարեմ:

ՀՈԳ. Տ. ՍԵՐՈՎԸԲԷ ՎՐԴԻ ԽՕՍԲԸ

Յոբելյանական կեդրոնական Յանձնախումբը գտնաբեր պարտականություն ստեղծ է ինձի ներկայացնելու Վեհափառ Յոբելյանական կեանքն ու գործունեությունը, թագավորնոր Յոբելյանը իր գիտնականի հանգամանքով, իր անբասիր և հաւատաւոր եկեղեցականի նկարագրով, իմաստուն լրջութեամբ, արդիւնաւոր գործունեութեամբ, ջերմ հայրենասիրութեամբ և մանաւանդ իր անձին հմայքովը լիցուցած ու առինքնած է ամբողջ հայութիւնը, այս առթիւ իմ կողմէ փորձ մը զննելու այդ բազմակողմանի անձնաւորութիւնը ներկայացնել, թուականներու և կենսագրութեան սեղմ շրջանակի մը մէջ, սահմանափակել պիտի ըլլար իրժով ստեղծուած խանդավառութիւնը և նուազեցնել իրժով իրագործուած արժէքները. վասնզի ան իր անձովը, իր գործերովը և իր գաղափարներովը այլեւս սէմպոյ մը դարձած է ամենուս Սակայն հիմա, երբ Երուսաղէմի գաղութը հանդիսաւոր գիտակցութեամբ և խորունկ հիացումով կը շրջապատէ իր ալեգարջ Հայրապետը իր գործունեութեան լիութեան և իր փառքի զագաթնակէտին մէջ, միտքն ակամայ կ'երթայ իր ծննդավայրին, պատմական Դարապաղին, ուր մտցուցած է Վեհափառը իր մանկութեան և պատանեկութեան առաջին տարիները միշտ հմայքին տակը այդ ազատ լեռներուն, ժառանգելով անոնց բնորոշ սիրտը, և մանաւանդ իր ծնողքին, որոնք թէեւ ներթափալտ շատ համեմատ ապահով հարուստ հոգեկան ժառանգութեամբ, յանձն կ'առնեն ամէն կարելի զոհողութիւն իրենց ուսումնատեանը զաւկին փափաքներուն զոհացում տալու համար: Երբ պատանի տեղւոյն նախակրթութիւնը լրացնելէ ետք կ'արձանագրուի իրր աշակերտ իշխմանի Գեղորգեան Ճեմարանի, հայրը շարաքներով կը մտահոգուի տղուն ճամբու ծախսը հոգալու համար, բարի մայրը նկատելով հոր մտահոգութիւնը իր հակոփ զարդը կազմող չորս զեղին ոսկիներէն երկուսը, որ թերեւս իր կեանքի ամենանշանակալն մէկ շրջանին յիշատակ մըն էր կը տրամադրէ այդ նպատակին: Այլեւս պատանի Գարեգին 1882ին աշակերտ է իշ-

միածնի հոգեւոր ճեմարանին, ուր պիտի կարենաք գոհացում տալ իր հոգիի և մտքի բոլոր ձգտումներուն:

Ութսունական թուականը մեր ազգային և մշակութային կեանքի անկրճողաբար շրջաններէն մինն է: Կերպարներու, ազգային արժէքներու վերագնահատման և ազգային ինքնագիտակցութեան շրջան մըն է: Վերանորոգում ամէն ուղղութեամբ և ամէն գետններու վրայ, որոնք կը կատարուին իշխմանի հովանիին տակ, Գեղորգեան Ճեմարանի միջոցաւ: Այդ միջոցներուն Օրմանեանի ներկայութիւնը իշխմանի մէջ իբր ուսուցիչ աստուածաբանութեան, այդ ոգին պիտի արժարձէր նաև եկեղեցւոյ ծոցին մէջ, որ յետոյ իրական բարեք մը պիտի ըլլար ազգային և եկեղեցական տեսակէտէն — Օրմանեան այդ շարժումը աւելի լայն չափով պիտի ստեղծէր Արամ շի մէջ, Դուրեանի գործակցութեամբ: Այդ շարժումին իրեն հետեւանք խումբ մը երիտասարդներ կ'ախտեն եկեղեցիին նախնային. ասոնցմէն են, Գարեգին Վեհափառը, Կարապետ Սպ. Տ. Մկրտչեան և վաղամեծ մեծ գիտնականը, Գեղորգ Կաթողիկոս Ձօրեքնեան, այժմու Ս. Իշխմանի արժանեղիմ գահակալը: Եւստի նաեւ անմահ կոմիտաս վարդապետ և ուրիշներ: Ասոնք ազգին և եկեղեցւոյ նկատմամբ իրենց հետեւոր նպատակներն իրագործելու համար չեն բաւականանար միայն Ճեմարանի ուսումով, Գիմնաիա կը զրկուին կատարելագործելու համար իրենց աստուածաբանական, իմաստասիրական և երաժշտական և գիտական ճիւղերու մէջ, կը վերագահանն իշխմանի ժամանակի եւրոպական մշակոյթի ռդիով օժտուած:

Մեր պատմութեան ուշադիր հետեւող մը Թորշ կերպով կը դիտէ որ մեր ազգային բոլոր արժէքները և մեծ գեմքերը ծած ու զարգացած են եկեղեցւոյ հողմանիին տակ, Վեհափառ Յոբելյանն ու եկեղեցիով արժէքաւորած ու իր կարգին փառաւորած է եկեղեցին: Գերմանիայէն վերադարձին Ճեմարանի մէջ կը ասանձնեալ աստուածաբանութեան գիտնականութիւնը և երկիցս կը վարէ անոք անսլոթները իր և իր ընկերակիցներու շուշէրին տակ նոր ոգի և նոր ազգութիւն կը ստանայ Ճեմարանը, ուրկէ գոհու հոգան այդ ըբբ-

Ջանի մեր ազգային կեանքին բոլոր մեծ դժգոհութիւնները, պիտանականներ և նշուական յեղափոխականները:

Բայց ինչ որ յատկանշական է Գարեգին Վեհափառի և իր սերունդի մէջ, առնոց նուիրումն ու սէրն է ժողովուրդի նկատմամբ որ այլիւս պաշտամունքի կը հասնէր՝ այդ բուն զգացումը պիտի մըղէր զիրենք փնջել այս Ժողովուրդի խաւերուն՝ դուրս բերելու համար անոնց ծոցին մէջ ծրարուած դարաւոր գեղեցկութիւններ և անոնց փողմէ ստեղծագործուած անմեռ արժէքներ, անմահ կոմիտաս պիտի մոռնար ինքզինքը վերադառնելու համար հայ երաժշտութեան հարազատ արուեստը, Թորմանեան կործանուած հայ ճարտարապետութեան գիծերու գեղեցկութիւնը և անմահ ոճը և Գարեգին Վեհափառը փոշիններու տակ ծածկուած արձանագրութիւններէն, մթութիւններու մէջ կորսուելու գաղտնաբերուած մազադաթներէն պիտի ստեղծէր հայ արուեստի պատմութիւնը: և հայու հողին արտայայտող մանրանկարչութեան գեղարուեստը: Այսպէս աշխատեցաւ այդ սերունդը ի խնդիր հայ արուեստին, հայ ստեղծագործութեան և գաւթերու մէջ ստեղծագործող հայ հողին:

Ընդհանրապէս գիտուած է որ արուեստի և մանազգիտութեան նուիրուող մարդիկ հետեւ կը մնան վարպետ և հասարակական գործունէութիւնէ, Վեհափառ Յոգեմարը բացառութիւն կը կազմէ այդ տեսակէտէն: Իր գործունէութիւնը կը տաւ րաժապ մեր ազգային կեանքի բոլոր բերեւեղութիւն վրայ, ամենաւն մէջ զննելով նոր ոգի և խանդավառութիւն, Ճեմարանի տեսլութիւնէն դառնալ կը վարէ իջմամբի պաշտօնակներին՝ մկրտանքի խորագրութիւնը: Իր հնագիտական, պատմական և ժողովրդական բանահիւսութեան յօգուած ներուժը զարգարելով անոր շէրերը: 1900-ին առաջնորդական փոխանորդ է Քիֆլիոն, արեւելահայ մշակոյթի վեգորներ, որ իր շուրջը կը խմբէ ամբողջ մասնաբաժնի գասը առաջնորդարանի հովանիին տակ ըստ տեղեկելով ազգային կեանք, հակառակ տիրող իրաւակարգի խառնութիւններուն:

Սակայն իր գործը նախախնամական եղած է մեր ազգային կեանքի Խանձանակաւորական շրջաններուն:

1915 աւան թուականներուն երբ թըրքահայաստանի զաղթականութիւնը կը խռովէ արեւելահայաստան, հոն գտնուող ազգային կազմակերպութիւններու և մասնաբաժնիներու ամբողջ գործունէութիւնը կը կեղերոնանայ խնամելու եւ մխիթարելու բախտէն կրկնակի հարուածուած այդ զրգթախանները, Գարեգին Վեհափառը զարժեալ ձեռնարկին պիտի կ'անցնէ և կ'աշխատայնչափ անձնորդացութեամբ և նուիրումով որ կ'արհամարհէ ստոյգ մահուան վտանգը: Իր հայրենասիրական և ժողովրդանուէր գործունէութիւնը սակայն իր զազաթնակէտին կը հոսնի Սարտարապատի ճակատաւ մարտին, ուր իր բանակի երէց առաջաւոր խրաժնիրու մէջ կը խրախուսէ զանակը ու հոգեկան գերյափշտակուած վիճակի մը մէջ ծունկի կուգայ ազօթելու հայրենիքի պաշտպանութեան և հայ բանակի յաղթանակին համար, երբ կ'արթննայ, կը տեսնէ սպանուած ամբողջ բանակը ծունկի եկած, կը խրախուսէ և անոնց կը ներշնչէ հայրենասիրութեան և նուիրումի ոգին ու ամենքը մէկ ուխտ կ'ընեն իրենց արեւն վերջին կաթիլն իսկ լնայելու նստատեղիներէն և հայրենիքը պաշտպանելու համար: Նոյն հերոսութիւնը և անձնախրուամի նոյն ոգին կը յայտնուի կարսի ճակատագրական դէպքին: Գերմարդկային ճիգ ի գործ կը դնէ արտայնդելու բռնակն ու ժողովուրդը բոլոր կը պատահի անխուսափելին, միայն ինքն է որ անախուսութիւն և քաջութիւն կ'ունենայ ներկայանալու թշնամի յաղթականին, ստոյգ մահուանէ փրկելու համար՝ հաղթաւոր անգլէն ու անմեղ ժողովուրդը: Կարելի չէ տխրախառն հիացումով լիկարգալ իր իսկ գրէնքը ելած այդ տխուր դէպքին նկարագրութիւնը: Վեհափառը ամենէն տխուր՝ օրը և երջանակութեան րոպէնքս: Անհուշ տխուր էր հայուն պարտութիւնը, հայրենիքի ամբողջ անակնկալ անկումը, ժողովուրդին անտարւնը ու յուսադատական վիճակը և իր երողութեան խորտակումը, բայց և երջանիկ էր որ կրցաւ իր միջնորդութեամբ ազատել իր նստող, բայց արի հօտը: Դեռնոց յիշենք, Ներսէսմեք, Առարապէցներու ծղին էր որ կը խօսէր ու կը գործէր իր մէջ, հայու զիւցադանարան և անշնչեմի ոգիին ներկայացուցին էր ան:

Արևիական նոյն ոգիով կը գործէր նաև իր եկեղեցական ապագայի մէջ. 1926ին, ամբողջ Ռուսաստանի առաջնորդ կը կոչուէր. ընկերային կարգերու յեղաշրջման, կրօնական հալածանքի և յուսկըստի տըխուր օրեր էին. եկեղեցականներն իսկ յուսահատ՝ դասալիք կ'ըլլային յաճախ: Գարեգին Վենամիան՝ «այր լի հաւատով», մեր կրօնական հորիզոնին վերև կուտակուած ամպերուն ետև կը նշմարէր Լուսաւորչի պլպլացող մշտաճառ կանխեղը և գործով ու բանիւ և երբեմն ալ գանիւ, ինչպէս կը պատմեն ականատեսները, կը խրախուսէր և կը քարոզէր աւետարանի յաւիտեական ճշմարտութիւնները և Հայ Եկեղեցւոյ փայլուն ապագան, իր ամբողջաշնչով քարոզներուն ոչ միայն հայեր այլ ուսմ ժողովուրդն ալ խառնելով Կ'ունկնդրէր, հաղորդուելու համար թրմով քրիստոնէական հարազատ ոգւոյն:

Բայց Գարեգին Վենամիան հայրենասիրական բարձր գգացումը և քրիստոնէական անուշ ոգին պէտք է տարածուէր նաև ամբողջ գաղթաշխարհին մէջ, հայուիկներ տարագիր, հայրենիքի կարօտով տոչորուող, ցրուցած ու անյարիր, սկաբարցած ճանաքի պայքարներէ, ու ահա 1935ին, կը հասնի Գարեգին Վենամիան իբրև նուիրակ Ընդհանրական Հայրապետին եւ աւետարելը վերածնունդ հայրենիքին, իր անձն ու խօսքը և հմտային դասախօսութիւնները եկեղեցւոյ դերին, հայ պետականութեան կալմաւորման, Հայաստանի մշակոյթին և շինարարական նուաճումներուն և նոյն իսկ անտեսական բարօրութեան շուրջ, կը խանգաժուէր ամէնքը ու կ'ելեգորականացնէ ամբողջ գաղթաշխարհը ու ամենուն ակնարկները կ'ուղղուէր Արարատի գագաթին իջմիտների գմբէթին: Բայց ամենէն խոռովայնը գաղութներուն, Ամերիկան էր ուր կեցած իբրև Առաջնորդ, իշու իբրև ցօղ քաղցրութեան իրենց հողիներուն մէջ, հանդարտեցնելով բոլորքած կիրքերը և եղբայրացնելով ամէնքը:

Տարագիր հայութիւնը գոհացում տուաւ համար իր հայրենասիրական, կրօնական և համերաշխ գործակցութեան ճշգրտեցումն՝ միաձայնութեամբ գինքը ընդարեց գաղթաշխարհի նուիրակութեան բարձրագոյն Աթոռին Առաջնորդ և Կաթողիկոս Կիլիկիոյ:

Կը հաւատամ թէ իմպատուն, հեռաւոր և աստուածաշնչական մարգարէնեւ, բու պէս Աստուծոյ հողէն ներշնչուած մարդիկ են որոնք ուղղութիւն կուտան պատմութեան ընթացքին և նոյնիսկ իրենք են որ զայն կը կերտեն. իբր այդ Վենամիան Յորեւմարին դերը մեր վերջին յիսնամակի պատմութեան մէջ մեծ եղած է: Իր կաթողիկոսութեան շրջանին երկու գեղաշնչապէս ազգօգուտ զաւապարներն են որ զբաւած են իր միտքն ու սիրտը, միասնականութիւն Հայ Եկեղեցւոյ և ժողովուրդի, ու դարձ ղեկի Հայրենիք. այս քոյք զաւապարներուն առաքեալն ու խորհրդաշնչը կարելի է կոչել զինք. Եթէ պիտի ապրինք իբրև ազգ և ժողովուրդ, Եթէ պիտի տեսականանայ մեր մշակոյթը և պիտի շարունակենք ստեղծագործել իբրև այս երկրագնդի տաղանդաւոր ժողովուրդներէն մին, ատրկա կարելի պիտի ըլլայ այդ երկու զաւապարներու իրականացումովը:

Վենամիան գործունէութեան այս թրուամբը որոնք իր կեանքի ամենակարգ կառուէ գիծերն էին միայն, ամբողջ կեանք մը կը իցնեն, ասոնց վրայ Եթէ աւելցնենք նաև իր գրական և գիտական աշխատանքները, որոնց ցարդ հրատարակուածները եւ բնուէրը կը հասնին իբրև հատոր, աւելիքան հարիւր յօդուածներով, և որոնց երազատիկը տակաւին դարաններու մէջ պատրաստ՝ պապագրութեան կը սպասեն, կ'ունենանք մտքի, հոգիի և սրտի տխտանք, որուն հովանին կը մաղթենք որ երկար տարիներ տարածուի ամենուս վրայ:

ԳԵՐ. Տ. ԵՂԻՇԷ ՎՐԻԻ ԽՕՍԲԸ

Վենամիան Յորեւմար

Արդւասակէմի Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռ՝ որ մշտ հայ մտքին, հայ արժէքներուն և իրաւացի սպասն է ունեցած իրեն իբր թելադրիչ և տիրական ըլլալուց, օւրախ է այսօր իր յարգանքը բերելու Մեծի Տանն Կիլիկիոյ նուիրակութեան Աթոռի պետին, և հայ մտքի և արուեստի մեծ մշակին:

Բանախօսները առհասարակ երբ նիւթ ունենան կենդանի անձ մը, սովորաբար

հարկին տակն են չափազանցելու իրենց արտայայտությունները, այս պահուստական հակառակ զգացումն է որ ինձի կ'այցելէ, կը վախնամ որ իմ արտայայտություններս մեան նհար ու անբովանդակ, կարենալ թափանցումը ընելու այն ընդարձակ վաստակին, որ Ձեզմով է պայմանաւոր:

Դժուար է ինձի քանի մը վայրկեաններու ընթացքին թափանցումը փորձել Ձեր ծանրակշիռ գործին, կը զգամ թէ խոշոր բուրգի մը առջեւ եմ կեցեր, որքան պատկանելի իր քանակով, նոյնքան և աւելի թանկ իր որակով: Եթէ ուզենք երեսել Ձեր գործը կրնանք բոլի թէ ան կը բաղկանայ Ա. — Ժողովրդային բանահիւստութեան վերաբերեալ հաւաքումներէ, Բ. — Պատմաբանասիրական և մատենագրական աշխատանքներէ և Գ. — Հայ արուեստի վերաբերեալ գործերէ:

Ա. — Ժողովրդային բանահիւստութեան վերաբերեալ հաւաքումներ՝ «Ստամ Ծոռեր», «Փշրանքներ ժողովրդային բանահիւստութեան», «Խոստում Զաւթ»՝ նախախաղիկը կը կազմեն նորին վեհափառութեան արդիւնքն, որոնցմով ան իր մուտքը կ'ընէ մեր մշակոյթէն ներս: Նպատակը ասոնց ոչ միայն բանասիրական աշխարհի ուշադրութիւնը հրաւիրել էր հայ ժողովուրդի բանահիւստութեան գանձերուն, այլ նաեւ որովհետեւ վեհափառը կը հաւատար թէ առանց ժողովուրդի շրթներուն վրայ տակաւին թըրթռացող այդ հոգեբազմութիւններուն և մեր անցեալէն շարունակուող թանկագին փըշրանքներուն՝ մեր պատմութիւնն ու մատենագրութիւնը, այսինքն հայ քաղաքակրթութիւնը, շատ բան կորսնցուցած պիտի ըլլար իր արժէքէն և նկարագրէն: Կարելի է մեր պատմութիւնը գրել ու մանաւանդ գտնել, առանց մեր folklore-ի թանկագին նպաստին:

Բ. — Պատմաբանասիրական եւ մատենագրական իր գործերն են, չիշելով միայն գլխաւորները, «Մատուցիկ թարգմանիչ» «Միտիթար Սասնեցի» «Միտիթար Այրիվանեցի» «Թովմա Մեծոփեցու կեանքը» «Ձազաւանից ժողովը», որոնք մեր եկեղեցւոյ պատմութեան և դաւանաբանութեան կը բերեն կարեւոր լուսարանութիւններ և ճշտումներ:

Այս կարգի տակաւին լոյս չտեսած

գործերէն են «Ոսկեբերանի», «Կլարի», «Որովիւէսի» հայերէն թարգմանութիւնները, ինչպէս նաեւ Ստեփաննոս Սիւնեցիի «Ձորից Աւետարան» մեկնութիւնը եւ Գր. Մագիստրոսի Թուղթերը:

Գ. — Հայ առուեստի վերաբերեալներ, գեղագրական, զարգացկարգական, մանրանկարչական ու ուրմանկարչական, որոնք զմիշ կը դնեն ցարդ անծանօթ մացած գեղեցկութեանց ամբողջ կայութիւնը առջեւ: Արուեստի այն վերաբերումներուն, ինչպէս որոշումներուն մէջ վեհափառը կը գործածէ այդ շրջանէն սկսեալ պատմագրական, բանասիրական և հնագիտական մեթոտներ, երեւան բերելով մեր միջնադարէն արուեստի նոր մարզեր:

Դրական մի զօրութիւն կայ միայն, որ աշխատանքը նուիրագործում է, կեանքին բովանդակութիւն տալիս, այդ սերն է — Մեր դէպի Աստուած, որ և նոյն է դէպի ընկերը։ Այն աշխատանքը, որ սիրոյ շարժառիթներով չէ ընթանում, քրիստոնեայի համար բարիք, նուիրական լինել չէ կարող։ Որովհետեւ սիրոյ շարժառիթներից զուրկ աշխատանքը դէպի ազահութիւն և արծաթսիրութիւն է տանում, որ ամենայն շարեաց արմատն է (Ա. Տիմ. Զ. 10)։ Սիրոյ շարժառիթներից զուրկ աշխատութեան վերջնական նպատակը նիւթն է միայն, այն ինչ մարդու հոգեւոր կոչումն է իշխել նիւթի և մարմնաւորի վերայ։ Այն անձնաւորութիւնը որ աշխատանքի վերջնական նպատակը միայն արծաթն է համարում, վատասկելու ժամանակ էլ միջոցների մէջ խտրութիւն չի գնում։ Արծաթսիրութեան հնագոյն պտուղը վաշխն է, որի դէմ մասքառելու համար եկեղեցական հայրերը մեծ ջանք պիտի գործ դնէին Եկեղեցու նշանաւորագոյն հայրերը՝ Եփրեմ Ասորի, Փրիլգոր աստուածաբան, Ռսկերբան և Յոհան Մանդակունի ճառեր ունին վաշխաւորութեան դէմ, դարերով քրիստոնեական եկեղեցու մէջ քարոզի նիւթ է եղել վաշխի շարաւոր գործածութիւնը։ Ընդարձակ իմաստով վաշխաւորութիւնը միայն մեծ տոկոսներով ուրիշին պարտք տալը չէ։ Վաշխաւորութեան ինքնը կեանքի ամէն պայմաններում, երբ հասկանալի, նիւթական բարձր համարնք արդարութեան տեսակէտից Շահանք արգելում չէ, մեր պարտաւորութիւնն է խորապէս լինել, հոգալով ձեռքութեան, մեր ողորդ գաստիարակութեան և ապաքին մասին, բայց չմոռանալով երբեք արդարութեան կշիռը։ Աստուծոյ պիտի բարիք լինի աշխատողի եւ օրոյնպէս ուստիակութեան համար։ Մենք առանձնապէս շեշտեցինք արծաթսիրութեան մի երևոյթը, վաշխաւորութիւնը՝ որովհետեւ այժմ էլ մեր ժողովրդական կեանքի, յատկապէս գիւղական կեանքի շարիքներից մէկն է։ Մասք սրտի պէտք է արանադրենք, որ նոյն իսկ մեր քահանաներից շատերը մասնակից են այդ մեղքին։ Վաշխաւորութեան մէջ մեծ դեր է խաղում յատկապէս ցո-

րենք։ Սակայն չհեռանանք բուն խնդրից, թէև այս հարցն էլ կարևոր է և արժանի առանձին խորհրդածութեան։

Դ.

Այսպէս ուրեմն աշխատանքը ինքնրար ինքեան բարիք չէ, նա կարող է մինչև իսկ մեծամեծ չարեաց, կեղեքման և թշուառութեան պատճառ լինել, եթէ սիրոյ և բարոյականութեան հիմունքների վերայ չէ հաստատուած։ Աշխատանքը նուիրական է, երբ Աւետարանի (անասնի առակը) և թուաքեկական թղթերի բարոյականութեան տեսակէտներով է կատարուած։ Այգադիսի աշխատանքը մարդկութեան համար Աստուծոյ օրհնութիւն է և բարոյական կրթութեան միջոց։ Աշխատանքով մինչև իսկ սահմանափակուած է մարդու ամենամեծ թշնամու՝ մեղքի զօրութիւնը. պարապ և զատարկաշըջիկ մարդը աւելի հակուած է ամէն տեսակ անբարոյական և մեղանոր փորձանքների մէջ ընկնելու, քան ջանասէր և աշխատութեան վարժ անձը։ Մարմինը ճնշելու և հոգեւորը զօրացնելու արգար և արգասաւիշի միջոցը աշխատանքն է։

Այս խօսքը վերաբերում է ոչ միայն կեկեղեցու սպասաւորներին, այլ և բոլոր քրիստոնեայ, աշխարհիկ մարդկանց։ Կարժամանակ, որ այդ նպատակին հասնելու միակ միջոցը ճգնողական խիստ կեանքն էր համարուած, մարդիկ կեանքի մէջ իրենց որոնած սրբութիւնը չգտնելով, հեռանում էին անասաւոր, այնտեղ իրենց հոգու խաղաղութիւնը պահպանելու և բացատրութեան կարօտ չենք համարում, որ ներկայի համար այդ հայեացքը միակողմանի է։ Ճգնողական (ոչ անասաւորական) գաղափարի մէջ այն ճշմարտութիւնը կայ, որ գոյաւորութիւնը կենք մեր կամքը, առանց տարին անընդունակ կը լինենք բարոյական սկզբունքների աշակերտ լինելու։ Շուրհեւ հաուէր մեծ փոխափան քրիստոնէութեան արժէքը այդ տեսակէտով էր միայն գնահատուած։ Բայց չափազանց ճգնողականութիւնը նոյնպէս մոլորութիւն է, ինչպէս ամէն մի չափազանցութիւն ընդհանրապէս։ Մենք պէտք է հասարակութեան մէջ և հասարակութեան համար ապրենք, որպէսզի ամենամեծ պատուէքը՝ սիրոյ պատուէրն ի-

րագործել կարողանանք։ Կամքի կրթութեան, հոգեւորը զօրացնելու և մարմնաւորը ճնշելու լուսագոյն և արդար ճանապարհն աշխատութիւնն է։

Բարոյական և սիրոյ շարժառիթներով կատարուած աշխատանքը Աստուծոյ օրհնութեան ամենամեծ աղբիւրն է։ Այնտեղից են զգիւում քաղաքակրթութիւն, գիտութիւն, արուեստ, գործնական արհեստներ, ճանապարհների հաղորդակցութիւն, վաճառականութիւն, բարեգործական և ուսումնական հաստատութիւնները։ Մի խօսքով մարդկային յառաջդիմութեան, բարոյական կատարելութեան խթանն ու միջոցը աշխատանքն է, բայց երեսնեակն մեզով աշխատանքը։ Մեր ընտանիքի հացը վաստակելու լինենք, թէ միլիոնների հետ խաղանք, միշտ նոյն սկզբունքն է, որ աշխատանքը բարոյական բարիք է դարձնում։ Եթէ մեր վաճառաւ քաղաքների գործադանակն և բանուորական կեանքը աշխատելու ճանապարհը, գուցէ աւելի թանձրացեալ և կենդանի ճերպով կարողանայինք քրիստոնէական աշխատանքի գաղափարը պարզել, բայց մեր՝ նպատակն է միայն քրիստոնէական սկզբունքը շօշափել առանց կեանքի մանրամասնութիւնների մէջ մտնելու։

Ե.

Շատերի համար, գուցէ, զարմանալի լինի, որ բարոյական աշխատանքը մենք քրիստոնէութեան անուան հետ ենք կապում։ Միթէ՞ քրիստոնէութիւնից առաջ աշխատանք չկար։

Աշխատանքը հին է այնքան, որքան հին է մարդկութիւնը, բայց գրականապէս կարող ենք ասել, որ աշխատանքը որբու է և բարոյական գաղափար է դարձել միմիայն քրիստոնէութեան մէջ։ Այս խօսքի ճշմարտութիւնը հասկանալի կը լինի այն անձնաւորութիւնների համար, որոնց յայանք է Յունաստանի և Հռոմի անկման պատմութիւնը և այն ժամանակուայ այս երկու քաղաքակրթութեան ազգերի հայեացքը աշխատանքի մասին։ Տեղի ոգութեան պատճառով մենք միայն մի քանի խօսքով կաւորող ենք նկարագրել այդ. ով կամենում է փոքրիկ աւելի ընդարձակ գաղափար ստա-

նալ այս մասին, յանձնարարում ենք կարգալ Մովսէսի Հոովմի պատմութիւնը: Անթէնքում և Հոովմում ժողովուրդը նպաստ էր ստանում պետութիւնից. յաւկապէս Հոովմի քաղաքացիք բաժին էին ծառանում պատերազմական աւարներէրէց, ցորեն էին ստանում պետական շտեմարաններէրէց, ձրի դուարճութիւն, խնջոյքներ, Նոյնիսկ դրամական նուէրներ զօրապետների յաղթական վերադարձի կամ կայսրական հանդէսներէրէր ժամանակ Այսպիսով ազատ քաղաքացիք հետզհետէ սովորեցին ձրիականութեան և խուսափում էին աշխատանքից: Հոովմէական սենատորներէր կամ ազնուականներէր կլինեմներ թափառում էին փողոցներում կամ հետեւում իրենց տիրոջ տաքիւն վնասելու: Բայց ամենամեծ չափերը առաջ տեսակէտից ստորութեան զուլութիւնն էր. աշխատանքը վայել էր քսա տրեկին և ոչ ազատ՝ մանաւանդ աշնուական և հարուստ քաղաքացու: Պողաւէտ խաչիւն, հիւսիսային Աֆրիկայի շատ մասերը քրիստոնէութեան ծագման ժամանակ ծածկուած էին գեղեցիկ և ընդարձակ պարտէզներով, երէններով լի անտառներով, զարդարուած արհեստական մեծ լճերով, ծաղկանոցներով, ապարանքներով... շատ քչերի զուարճութեան ծառայելու համար: Բնականաբար սենատորներէր ընդարձակ կառուածներում, ամարանոցի պարտէզներում աշխատում էին ստրուկները, այն էլ ազայնքան հողը արդիւնաւորելու, որքան իւրենց տիրոջ շահույթներէր և զուարճութիւններէր համար: Վաճառարաններէր և նրա, արհեստները, Նոյնիսկ երկրագործութեան, մնացորդները ստրուկներէր ձեռքն էր: Աշխատանքն անվայել էր ազատ քաղաքացու, լազնուատում մարդկանց, երանք պէտք է խնջոյքներով, փիլիսոփայութեամբ, քաղաքական պաշտօններով զբաղուէին: Ազատ արհեստաւոր քաղաքացին հարուստ ստրուկներով հետ մաքառել չէր կարող, և այդպիսի արհեստաւորն էլ Նոյնիսկ և փիլիսոփայութեան մէջ աշխատանքը բարոյական դադափար լինել չէր կարող: Իրամի, հարստութեան սէրը դրանով ի հարկէ ամենեւին չէր ասանականացուած, ընդհանրական սպահութիւնը, առանց միջնոցների խտրութեան հարստանալու տենչը

յատուկ է այն անձնաւորութեան և այն հատարակութեան, որ չի սիրում իւր երեսի քրոնքով հաց վաստակել: Արդարեւ ոչ մի տեղ վաշխառութիւնը այնպիսի չարիքն էր զործել, ինչպէս հին Հոովմում: Միաքաղաքի օրինակին էին հետեւում քսա ամենայնի պետութեան բոլոր մեծ քաղաքները՝ Աղեքսանդրիա, Անտիոք ևն.: Ահա այսպիսի հատարակութեան մէջ՝ ընդ չում է քրիստոնէութեան բարոյական քաղաքը աշխատանքի մասին: Ինչպիսի նորութիւն և ինչպիսի կենդանաւոր զօրութիւն էր այս քաղաքը, ցոյց էր տալիս մեզ պատմութիւնը:

Զ.

Քրիստոնէական եկեղեցոս պատմութեան մէջ կարծիք թելի նման անցնում է աշխատանքի բարոյական այս քաղաքը: Առաքելի խօսքերի համաձայն աշխատութիւն և բարեգործութիւն զուգընթաց են եկեղեցոյ պատմութեան մէջ: Հոովմէական պետութեան մէջ ազատ, բարոյական աշխատանք չկար, ուստի և բարեգործութիւն չկար բանտարանի մտքով: Մենք առիթ ենք ունեցել զեկեղեցիի և ազատայնների խնամատարութիւն վերնադրով յոգադածների մէջ նկարագրել հեթանոսական «բարեգործութեան» բարոյականութիւնից զուգընթաց կողմերը: Քրիստոնէական բարեգործութիւնն զի աշխատութիւնը սկսուել է նոր կրօնի ծագման հետ, բայց իւր զարգացման բարձրագոյն աստիճանին հասել է վանականութեան մէջ, այնտեղ էլ հիմնուել ճշմարիտ աշխատանքութեան դպրոցը, ուր աշխատել սովորեցին քրիստոնէական բարեպաշտ ազգայնութեան, կնիստուած ազգայնութիւնի մասին չէ, որ չարական պատականութեան մասին չէ, որ չարական ծայրայնութեան հանգամանքների պատճառով: Վանականութեան կանոնների մէջ շատ կարեւոր տեղ է բռնում աշխատանքի գաղափարը. իսկ նախկին վանական շտեման մէջ, ինչ որ կանոն էր, այն էլ իրագործութեամբ էր կանոնի մէջ: Բարանց կեդրոնացում և նորան հետեւող անձանց հանճարը լաւ ըմբռնել էր բարոյական այն վտանգը, որ առանց դրափան և հա-

նոնաւոր աշխատանքի ծագել կարող էր միայնակեացներից կազմուած միաբանու-
թեան մէջ։ Պարագութիւնը վանականին
գէպի բարոյական անգուշը կարող է ա-
ռաջնորդել, ուստի և այնպիսի կազմակեր-
պութիւն էին տուել վանականութեան, որ
գէպի կեանք և փրկութիւնն տանէր։ Վա-
նականը ոչ միայն իւր հացը պիտի վաս-
տակէր, այլ և թշուառներին, կոյրերին,
որդերին, աշխատելու անընդունակ եղ-
բայրներին օգնելու միջոց ունենար։ Աշ-
խատանքն սկսուում էր աղօթքով և օաղ-
մասեցութիւններով։ Իւրաքանչիւրն աշ-
խատում էր ինչի ընդունակ էր կամ ինչ-
պէս վանահայրն էր կարգադրում, նոքա
պաշտուած էին արհեստներով, երկրագոր-
ծութեամբ, պարտիզպանութեամբ, գրա-
կան վաստակներով, արուեստներով, քա-
րողութեամբ, հիւանդների և քղքատների
խնամապարսկեամբ, որբերի կրթութեամբ
և օայլն։ Բարեւել . կենսաբացու վանոններն
անցնում են և Հայաստան։ Հայոց վան-
քերում ևս ծագելու է քաղաքակրթու-
թիւնն ու քաղաքործութիւնը, ինչպէս օ-
րիշ երկրներում։ Մասլ զաղափարներից
ազատ չէ օչ ասորա—յունական և ոչ մեր
վանականութիւնը, բայց այնքան մեծ,
այնքան գնահատելի է նորա արդիւնքը,
որ մենք աստուածային օրհնութիւն ենք
համարում այդ երեւոյթը պատմութեան մէջ։

Ինչ օր ասացինք արեւելեան ազգերի
վանականութեան մասին, նոյնը աւելի մեծ
էափով կարող ենք ասել արեւմտեանի հա-
մար։ Այստեղ վանականութիւնը աշխա-
տափրութեան ճշմարիտ գպրոց և գաւա-
նում արեւմտեան կիսակիրթ ազգերի հա-
մար։ Ճահիճներ չորացնելու, ճանապարհ-
ներ և կամուրջներ շինելու, բանուղ երկ-
րագործութեան, արհեստների և արուեստ-
ների, գիտութեան առաջին ուսումնցիլները
Գալլերի և զերմանական ցեղերի հոմար
վանականներն են եղել։

Թող հայ ժողովրդի բոլոր դասի սըր-
տում անշինջ շորշուռին առաքեալի խօս-
քերը։

«Որ ոչ կամիցի գործել և կերիցէ մի» .
«Մի՛ ձանձրանայք զբարիս գործել» և

ԳԱՐԵԳՐԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Գեղի Հայ և Կնիւ»

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԴԷՊԻ ԼՈՅՍ ԵՒ ԿԵԱՆՔ

ԳԱՐԵԳՐԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵՆԻ ՅԱՆՆ ԿԻՂԿԻՈՑ

1947 թ. ԱՆԹԻԿԻՍ

Գեղեցիկ ու բացառիկ հատոր մը քա-
րոցներու, ինչպէս նաեւ աւետարանական
մտածումներու և ազգային ապրումներու,
խօսուած ու գրուած մեծ եկեղեցականին
հովուական, հրապարակախօսական, հոգե-
ւորական և ազգային գործունէութեան ըն-
թացքին։ Զանոնք հատորի կապելու Նորին
Ս. Օծութեան զլիաւոր նպատակն է եղած
օգտակար լինել նորահաս եկեղեցականնե-
րու, անոնց հոգեւոր առաքելութեանը մէջ,
կրօնական պարտաւորութեանց թելա-
գրանքէն փրկած և այս քարոզները, իրենց
առաջիկայ ունեցած են խորունկ զգայնու-
թիւն մը, որ Նորին Վեհափառութեանը
եղած է միշտ, հոսուսի ապօս մը բանալով
գէպի զանգուածներու սիրտը։

Նորին Ս. Օծութիւնը իր ասպարէ-
զին առաջին աստիճաններէն սկսեալ մին-
չեւ բարձրագոյն գաղաթները մեր նուիրա-
պետութեան, լեցուցած է միշտ իր ունկն-
գիրները ազնուական խոռովքով մը, խօսքի
ճշմարիտ թովչանքով ողողելու զանգուած-
ները, ինչպէս տօնական, այնպէս ալ կանա-
դիական օրերուն Վեհափառը բարձրա-
թափէ առանձնաատելի և մանաւանդ երբ
կը խօսի ազգային, գրական և մեր ան-
ցեալ արժէքներու չորով։ Հոս, այս գետն
նին վրայ, իր խօսքը կ'ամրանայ այն ան-
անուն զգացումով, որ մեր պատմութեան,
մեր անցեալին, մեծ ստեղծագործութեան
թափին և տառապանքին է եղած։

Ազգային պատմութիւնը, սրտառուչ,
անսպառ շոտմարանն է Զարկէ կը քաղէ
Վեհափառը իր խօսքին տարրերը։ Ա. Գիւ-
քը երկրորդ աղբիւր՝ Զարկէ կ'առնեն ի-
րենց ուղղութիւնը իր մտածողութեան
մանրաթելերը։ Սակայն ասոնց չափ և ա-
ւելի իր խօսքին սատար կը բերեն իր ըն-
դարձակ, ամբողջ հայ կեանքը ընդգրկող
շփումները, անոնց հետեւող կենդանի, իս-

րական, տպաւորիչ փորձառութիւնը եւ որովհետեւ բոլոր այս նարքերուն հաւաքական նկարագիրը կ'իյնայ պարունակին մէջը մեր ազգային. գոյութեան, անոր հարկադրած մտահոգութեանց և ընդառաջ՝ ուելիք միջոցներուն, ինքնին կը հասկցուի չանհանձնութիւնը այս քարոզներուն: Ուրիշ չորհրդ՝ ակադեմական չլլալուն իր գաղտնիքը, Վանդի իր խօսքը բառ ըլլալէ առաջ գործողութիւն մըն է:

Գերագոյն խօսողը, ինչպէս ըսուած է, ան է, որ կրնայ ըլլալ իր ժողովուրդին ձայնը: Քարոզիչը ձայնն է Աւետարանին, նոր Լուսի մարդը, պատգամաւորը ճշմարտութեան: Պագաւմ և վկայութիւն անայն երկու երեսները որոնց կը հանդիպինք. Վեպի Լոյս և Կեանք քարոզներու հատորին մէջ: Պատգամ մը աւանդուած է մերի ուրիշներուն փոխանցելու, բայց մենք պիտի չկրնանք զայն փոխանցել, մինչև որ ան չիյնայ մեր սեփական փորձառութեանը ներքիւ, մինչև որ չկարենանք անոր տալ մեր անձնական վկայութիւնը՝ անոր հոգեւոր և զգացուած գործութեան: Ինչէ Աւետարանի պատմեանն ունի միշտ իր առիւն պատգամ բառը, պիտի փրկուի յայրատ ու վայրենի հայեցողութիւններէն և ինքնատիպ ըլլալու կիրքէն: Իսկ ան որ բնաւ չի մոռնար վկայութիւն բառը, պիտի ազատագրուի սուտ բանաձեւերու այն կրկնութիւնէն, որ իբր ուղիւ՝ փառ սովորած՝ բայց երբք ճշմարիտ նկատուած չէ: Այս զոյգ իրողութիւնները սքանչելի ներդաշնակութեամբ մը կը միանան Նորին Ս. Օծութեան խօսքին մէջ. ան, նման մեծ պատգամաւորներու, կը մոռնայ ինքզինքը իր պատգամաբերութեանը մէջ:

Երկրորդ և աչքառու պարագան որ ճշմարիտ քարոզիչինն է, ի յայտ կուգայ հեմարսուքեան և անձնաւորութեան զոյգ տարրերու ներդաշնակ արտայայտումով: Ամենաճշմարիտ և հեղինակաւոր իրայայտութիւնը Աստուծոյ կամքին, երբ չունի իր հետ անձին թրթռացող մասը, կը դադարի ներգործիչ ըլլալէ: Քրիստոնէական ճշմարտութիւնը անձնական է գերազանցօրէն, և հետեւապէս անձին պատրաստութիւնը, կարենալ բանալու ինքզինքը ճշմարտութեան և՛ մարդոց, մեծ տեղ ունի

քարոզելու արուեստին մէջ: Ճշմարտութիւնը անհատականութեան միջոցաւ ճշմարիտ նկարագիրն է քարոզին: Ճշմարտութիւնը պէտք է բխի անձին, ոչ թէ չրթներէն, կամ գրէն. պէտք է ան հոսի իր նկարագրէն, իր բովանդակ բարոյական էութենէն: Հոս է հսկայ տարբերութիւնը քարոզիչներու, Աւետարանը կուգայ մեզի անհնցմէ մէկուն վրայէն, գունաւորուած և համեմուած իր մակերեսային նկարագրով, խառնուած յաճախ իր փոքրութեամբ: Աւետարանը ընդհակառակն կը բխի միւսէն՝ ճշմարիտ քարոզիչէն, դրու՝ մուծ՝ ու թեւաւորուած այն բովանդակ լրջութեամբ, որ իրենն է: Առաջինը խոշովակ մըն է լոկ, երկրորդը՝ իրական պատգամաբերը Աստուծոյ:

Նորին Ս. Օծութիւնը մեծ անձնականութիւն մըն է, իր մասնութեանը կը յորդին այն մեծ ճշմարտութիւններով, որոնք Աւետարանին են, մեր ժողովուրդին, մեր պատմութեան և մեր լուսաւոր ու մուշտակաւորութիւն: Անկա մեծ հաւատաւոր մըն է կրօնական և ազգային ճշմարտութիւններու, ի վերջոյ կրակէն միայն կը ստացուի կրակ, և վեհափառը գերագոյն հաղորդիչն է, իր անձով, ճշմարտութիւնը իր եղբար մարդերուն բերելու: Թէ ինչ է տարբերութիւնը որ կը բացառէ ինքն իր անձններէն, դիրքին չէ բրակել, խաճէ, պիտի խոստովանուի, մաքնիսականութիւն, քարոզելու շնորհ, բոլորը թեւեւ, վերջապէս այն ուրախութիւնը զոր կ'զգայ մարդ ճշմարտութիւնը մարդոց տանելու իր կերպին մէջ: Այն մարդ վերջապէս, որուն շնորհիւ մարդը կը կորսնցընէ ինքզինքը և կը դառնայ համակրութիւն մը, անհուն յոժարութիւն մը, դէպի ճշմարտութիւն և դէպի եղբայր մարդը, հաւատարապէս բացուած:

Յետոյ վեհափառը ունի այն անհրաժեշտ քաջութիւնը՝ որ ճշմարիտ քրիստոնեային է յատուկ: Պէտք է զխնայ մարդոց գաղափարներէն: Այս չի նշանակիր սակայն թէ պէտք է անարգել մարդերը իրենց տկար կողմերուն համար: Ով որ կ'անարգէ, անոնց գերի ըլլալու ճամբուն մէջ է: Պէտք է յարգել մարդոց բարեբաւ զոյն բնութիւնը, այս վերջին պարագան միայն զմեզ քաջ կ'ընէ: Գնահատանք մար-

գուն հոգեկան քննութեան, ինչ որ աւետարանական քարոզչութեան և Նորին Ս. Օ. ծութեան քարոզչութեան գերագոյն շարժառիթը կը կազմեն:

Վեհափառը ամուր է ճշմարտութեան նկատմամբ՝ ազամանդի նման, և քաղցր հօր մը պէտ՝ մարդոց նկատմամբ:

Կալուք քարոզչիքը յօրինելու իր կերպին, պէտք է ըսել թէ անոնք կ'սկսին ինչո՞ւ խմբատուրի մը պէս և կը վերջանան երկուսուսուրի մը եռանդով, ինչ տը պահանջն էր Կոստի՝ իր ուշակերտներէն: Վեհափառի բովանդակ խօսքը ամէնուրեք փթթումն է առաջին զաղափարին. առ գիտէ՞ք՝ զբնակիլ իր նիւթին մէջն ինչպէս կը սխրէր ըսել Դիւտալը: Սակայն յօրինման այս կարգը կոյսական (L'ordre statique) ըլլալէ աւելի՝ ուժական է, (L'ordre dynamique) շարժում է ամբողջը, Եթէ կայական կարգին մէջ ճառին բոլոր մասերը իրարու զօդուելու և ամբողջին կապուելու յատկութիւնը կայ, միւս կողմէն վերացական ըլլալու ենթակայ է: Միւշկեռ ուժական կարգը ձեռ մը ըլլալէ աւելի՝ ոգի մըն է, այսինքն շարժում մը:

Բուական չէ միայն զաղափարները գասաւորել, պէտք է զանոնք բոլորը դէպի մէկ կէտ ուղղել, բանակի մը պէս կարգի մտած յաղթական յարձակումին ի խնդրօր Դիւցազնական այս խոյանքը քարոզին կուտայ աւելի միութիւն, և ծանրութիւն քան անշարժ տրամաբանութիւնը: Կեցողածք մը խօսք մը այն տտեն միայն գեղեցիկ են և կենդանի, երբ կ'արտայայտեն կառարարած կամ կառարարելիք շարժում մը: Բիրտոնէական քաղցրին յատակաւ գիծը, ումէն բանէ աւելի, պէտք է դաժական լինի, աչսինքն իր յօրինուածքը, փէտք է կազմուած ըլլայ ուժերէ և ժեպտիքի:

Յիշպի Լոյս և Կեանք՝ հատորին մէջ խմբած բոլոր քարոզչիքը, ունին ոգիի և յօրինման այս յատկանիշները, որոնք միայն մեծ քարոզիչներու են յատուկ: Վեհափառը մեծ և անմասն քարոզիչ մըն է:

Ս. Ա. Ս.

ԱՍՏՈՒԱԾԱՏԻՊ ՄԱՐԴԸ

(ԽՂՃԻԾ ԲԵՄԷՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՆՆԵ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

Ա. ՀԱՏՈՐ, ԱՂԻԲՈՒՆԴՐԻԱ, 1947

Ճիշդիւ Բեմէն հատորը, «Ամուսնական խառնակութեան քննութեան» ու բանականութեան վերջ, երկրորդ գեղեցիկ ու մասնաշարժական գործն է Տ. Հայկազուն քահանային: Առաջինը՝ Աւետարանի պաշտօնեայի իր սրտագին տուրքն էր իր ժողովուրդին, տարիներով սերտուած, մտածուած և հոգեկրօնած. իսկ երկրորդը ճշմարիտ գաստիարակի տուրքը հայ դպրոցին, որուն հրաշքը իր հոգիին համար, նուազ չեղաւ երբեք առաջինէն, իրրիւ լրացուցիչը մանաւանդ անոր:

Հատորը կը բաժնուի չորս մասերու: Առաջին մասով հեղինակը կը ճշդէ մարդէակին կարելիութիւնները, անոնց նպատակաւորութեան ի խնդրի կատարելութեան, իր արժանիքները և անոնց մշակման եւ զանակները: Երկրորդ մասին մէջ կը մատնանէ միջավայրը (ընտանիք, դպրոց, բնակարաններ) եւ անով ստեղծուելիք պայմանները, որոնք ընթացքին մարդուն շինութեան, անոր պարտականութեանց եւ փոխարարութեան գործը իր կատարելութեան կը տարածի: Իսկ երրորդ և չորրորդ գլուխները՝ քաղաքացիականութեան ըլլալով հանդերձ ինքնական մասին, կ'ամբողջացնեն մեր յարգանքի և պարտականութեանց բաժինը, զոր ամէն գիտակից և ազնիւ մարդ պարտի ունենալ հանգէպ իր անձին, բնկերին, ուսուցիչին, և բոլոր անոնց՝ որոնք կեանքին բարիքը կը նիւթեն և կը կազմակերպեն:

Կանխեմք ըսելու թէ հատորը նախակրթարանի բարձրագոյն կարգերու և երկրորդական վարժարաններու համար պատրաստուած բարոյագիտական դասագիրք մըն է, և իրրեւ մեթոտ ու մշակում իր կենսաբանական, բարոյագիտական և մանաւանդ գաստիարակական գրութիւնով, լաւագոյն ձեռնարկն է զոր ունինք ցարդ: և այնքան անհրաժեշտ մեր դպրոցներու համար: Բ. հատորը որ ի պատրաստու-

թեան է, պիտի ըլլայ անշուշտ շարունակութիւնը առաջին այս հատորին, վերուստումը ընտղ անհատական եւ ընկերային պարտականութեանց:

Հեղինակը, տարիներու փորձ ու հըմուտ դաստիարակ, գիտցած է ի մի ներգաշնակել, հոգեբանական, քաղաքական եւ բնագական այն բոլոր կարելիութիւններն ու ձգտումները, որոնց հասկացողութիւնն ու գործը անհրաժեշտ է ազնիւ եւ կատարեալ մարդեր պատրաստելու եւ զանոնք իրենց գերին սահմանելու համար:

Անշուշտ ոչ դասագիրքերու խրատը եւ ոչ ալ բոլոր ճարտար ու հնարամիտ ցուցմունքները չեն կրնար զմեզ առաջնորդել ազնիւ ու կրթութեմ մարդու կոչումին, եւթէ չկարենանք զգարիլ հոգիով, ինչպէս կ'ընէ առաջեայլը: Հոգիին գիտակցութիւնն է ճշմարիտ դաստիարակութեան նախապայմանը, օրէնքը: Սակայն դաստիարակին գործն է հոգիին մէջ կենսաւորել ու կերպարանաւորել, աւելի ճիշտ գործարանաւորել մտածումի գործ մը, արուեստի գործ մը, զոր մէջք դաստիարակութիւն կը կոչենք: Դժուար է բացատրել այն զերը զոր ունի ճշմարիտ դաստիարակը, սակայն անտաւազուսելի է անոր իրականութիւնը, եւ դժբախտ են իրապէս այն բարոյախօսներն ու դաստիարակները՝ որոնք լուսինն այգ յատկութիւնը, որոնք չեն կրնար իրենց սրտի զգեւորութենէն ընդունիլ զայն: Տ. Հայկազուն Բհնյ. Ոսկերիչեան օգտուած մըն է ինչպէս մտքի նոյնքան ոգիի այն բոլոր փառանքութիւններով, որոնք ի վիճակի կ'ընեն զինքը զգալու եւ մեղի փռութանցելու իր հատուցով այն երջանկութեանը՝ որ նախ հեղինակին է եւ իրով իր գործին:

Հայկազուն Քահանայի գործը ոչ միայն իրրեւ մեթոտ եւ հմտութիւն, այլ մանաւանդ իրք զուրբաւորող գաղափարակի մը հոգիէն իր ընթացքն աւ կազապարը հաւգած աշխատութիւն, ինչպէս ըսինք, եթէ ոչ առաջինը, քայց միակն է որ ցարդաւան, հոգեբանական, կրօնական եւ քառաստիարական տուեալներով կը քանայ աշաւ կերտի եւ մարդուն դաստիարակութեան եւ շինութեան գործը պայմանաւորել, եւ իքքազաքացիլ, հայաւ եւ մարգու պարտականութիւնները զգացնել գւ ճշգիւ:

Մեր մեծ ուսուցչապետներ՝ Ռ. Գերպերեանէն սկսեալ մինչեւ Դուրեանն ու Հինգիւնը, գաղան հայ դպրոցին ձգելու ուսուցման մը մեթոտն ու գիտութիւնը: Հայկազուն Քահանան տարիներու իր փորձառութիւնն ու հոգիի ու մտքի պայծառ գիտակցութիւնը երբ այդպէս մեթոտի եւ դաստիարակական ձեռնարկի վերածած կը մաղուցանէ մեղի, կ'ընէ գործ մը որ արժանի է իրական գնահատման եւ շնորհագգածութեան:

Հատորը իր ձեռնած նիւթերու հմտութեան, գաղափարի ատուցութեան եւ պատշաճ քասուտուումին կը միացնէ լրջութեան կշիռ, քաղցրութիւն, որոնք անհրաժեշտ են նման ձեռնարկներու պարագային, վանելի սիրելի յարեիար Տ. Հայկազուն Բհնյ. Ոսկերիչեանը ամէն բանէ թառալ սրտի մարդ է եւ հոգեթոխ դաստիարակ: Իր գործը արժանի է գնահատման, վանելի հայ դպրոցին այնքան անհրաժեշտ բարոյական կրթանքին կը բերէ գեղեցիկ սատար մը:

Ս. Ա. Ս.



Նարին Ս. Օճուրեւ Վեհափառ Հայրապետ
դիմաւորուած Վրացեան սահմանագրութիւնը:

ԳԵՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՄԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՑ

ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂԱՅ ՆՈՐԻՆ, ՀԱՐԱԶՈՏ ԶԱՒԱԿԱՅ Մ. ԱԹՈՌՈՑ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕԲՀՆՈՒԹԻՒՆ ԼԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայրենիքի եւ Հայ Ազգի հաւատարիմ զաւակներ,

Աշխարհի յորս կողմից եկել էք Դուք եւ Ամերիկեան միւս Հանրապետութեան հովանու ներքոյ Համազգային ժողով գումարել՝ Հայ ազգի անունից առկոչելու քաղաքակիրթ մարդկութեան խղճին, դեմոկրատիկ աշխարհի արդարադատութեան ի պաշտպանութիւն մեր համազգային արդար դատի, յանուն թշնամուց բռնադատուած մեր սրբազան իրաւունքների:

Հայ ժողովրդի ազնիւ ներկայացուցիչներ,

Ոգեշնչուած հայրենասիրութեան եւ ազգահաւաքման վառ զգացմունքներով Դուք քաղաքական պարզատես իմաստութիւն ունիք զգալու եւ գիտակցելու, որ այսօր՝ առաւել քան երբեք, Ազգն ու Հայրենիքը կանգնած են անկրկնելի ու բախտորոշիչ դարաշրջանի հանդէպ:

Հայ ժողովրդի առաջ այսօր հրամայաբար կանգնած են երկու ճակատագրական խնդիրներ — ա) Հայութեան ազգահաւաքումը իր նուիրական հայրենի հողի վրայ եւ բ) Վերստորացումը մեր մայր Հայրենիքի բռնազրաւուած հողերի:

Այս երկու խնդիրների նկատմամբ էլ Հայ ժողովրդի հարազատ հայրն ու պատմական—անդաւաճան ներկայացուցիչը՝ Սուրբ Էջմիածինը կատարել եւ կատարում է իր նուիրական պարտքը, իր իրաւանց սահմաններում գործելով: Համայն աշխարհի եւ բոլոր Պետութիւններին արդէն իսկ լսելի են դարձել նորա ծայրը:

Ազգային սուրբ դատի բազմադարեան հաւատարիմ պաշտպան Մայր Աթոռը՝ ունկնդիր Սփիւռքի տարագիր մեր զաւակների արդար պահանջի՝ անդրուելի կանգնած է իր կոյման ու պարտքի կատարման պատասխանատու դիրքերում:

Այսօրուան Ձեր պատմական համագումարը լաւագոյն արտայայտութիւնն է ու արտայայտիչը աշխարհագրականօրէն անջատ, սակայն ազգայնօրէն միակամ Հայ ժողովրդի:

Հայրապետական ջերմագին ողջոյն Համագումարիդ,

Դուք եկել էք միանգամ եւս լսել տալու աշխարհին Հայ ժողովրդի ծայրը, նորա կամքը միահամուռ եւ պահանջն արդար, նուիրական պաշտպանութեան ուղին հարթելու եւ յաղթանակով պսակելու:

Հայ ժողովուրդը՝ սիրեցեալ Հայրենիքի սահմաններում եւ իր բազմադարեան պատմական գոյութեան ընթացքում, հերոսաբար պայքարել է ազգային անկախութեան եւ ազգամիջեան եղբայրութեան համար՝ յանուն՝ արդար ու խաղաղ աշխատանքի եւ ընդդէմ կործանարար վայրագ կարգերի, յանուն քրիստոնէական մարդասիրութեան եւ ընդդէմ ռազմատենչ ֆանատիկոսութեան, յանուն քաղաքակրթութեան, ճշմարտութեան ու արդարութեան եւ ընդդէմ քարքարոսութեան, խաւարի ու անիրաւութեան: Դարեր շարունակ անթիւ—անհամար նահատակների անմեղ արեամբ ու նշխարներով է

չէն եւ ուրիշները, անկախ իրենց քաղաքական դաւանանքից՝ միշտ պաշտպան են կանգնել մեր գաւորին: Ամերիկեան մեծ Դեմոկրատիան, նրա լայնատիրոջ եւ մարդասէր ժողովուրդը, պատգամաւորները, եկեղեցու սպասաւորները միշտ ջերմ պաշտպաններն են եղել մեր դատի եւ մեծագոյն պայքարողները Հայ նահատակուող ժողովուրդի արեւն կզակ դահիճների դէմ: Վուլքո Վիլսոն, Ջեքսոն, Մորգենտաու եւ անթիւ շարանը ազատատենց եւ մարդասէր ամերիկացիների անշահախնդիր ու անձնուէր պաշտպաններն են եղել միացեալ հայ հայրենիքի ազատութեան ու անկախութեան, ողջ Հայ ժողովուրդի երջանիկ կեանքի: Մօտ երեսուն տարի առաջ ամերիկական եւ եւրոպական ժողովուրդներն ու կառավարութիւնները սրբագործեցին մեր դատը միջազգային դաշնագրով: Այդ ժողովուրդները չեն կարող մոռնալ իրենց իսկ վարած ազնիւ ու խանդավառ պայքարը յանուն Ազատ Հայաստանի, յանուն Հայ ժողովուրդի:

Առաջաւոր մարդկութիւնը լատտեղեակ է, թէ ինչպէս Հայ ժողովուրդը իր ազգային հանճարի ոյժով ստեղծել է իր ազգային փայլուն մշակոյթը, որ դարերի ընթացքում հանդիսացել է նորա գոյութեան, ու զարգացման քարոյական մեծագոյն կուռանը:

Որ Հայ եկեղեցին պաշտպանել է Առաջաւոր Ասիայում Քրիստոնէութիւնը ընդդէմ հեթանոսական եւ այլ Քրիստոնէութեան թշնամի պետութիւնների զօրեղ հալածանքների եւ՝ իր հերոսական պայքարով՝ Քրիստոնէութեան ջնջման վտանգը չէ զրոյացրել:

Որ Հայ ժողովուրդը՝ դարեր շարունակ պայքարել է իր անկախութեան ու ազատութեան համար եւ՝ իր արեան գնով՝ պաշտպանել է իր Հայրենիքը:

Որ Հայ եկեղեցին մասնակցել է Արեւմուտքի եւ Արեւելքի, եւրոպական կուլտուրայի եւ ասիական խաւարամտութեան մէջ յարստեւած է եւրոպական առաջաւոր կուլտուրան Մերձաւոր Արեւելքում եւ Միջին Ասիայում:

Որ Հայ ժողովուրդը՝ ստեղծել է իր հարուստ մշակոյթը՝ գրականութիւն, արուեստ, գիտութիւն, այլ եւ կլասիք գրականութիւնը, որ թարգմանուել ու թարգմանուել է աշխարհիս բազմաթիւ լեզուներով եւ թանկագին աղբիւր է հանդիսանում հայ մաշխարհային պատմագրութեան եւ առանձնապէս արեւելեան ազգերի պատմութեան լուսաբանութեան համար:

Համաշխարհային գիտութեան եւ մասնաւորապէս պատմագրութեան կողմից բազմիցս շնչուուել է Հայ ժողովուրդի խոշոր դերը Առաջաւոր Ասիայի կուլտուրական զարգացման մէջ:

Սակայն մեր ազգային դատի արդարութիւնը հիմնուած է ոչ միայն Հայ ժողովուրդի կուլտուրական անցեալի արժէքաւորման վերայ: Մեր դատի օրինականութիւնը հիմնուած է Հայութեան դարաւոր ու հերոսական պայքարի վերայ՝ յանուն Հայրենիքի անկախութեան, Ազգի ազատութեան, իրաւունքի ու արդարադատութեան յաղթանալի: Շատ յաճախ մենակ ու անհասար ոյժով է վարել Հայ ժողովուրդը իր հերոսական պայքարը ընդդէմ ահարկու եւ արեւիսարբու բռնապետութեան: 90-ական թուականների հայկական ջարդերը, 1915-18 թթ. կոտորածները, 1920-21 թթ. նորանոր ջարդերն ու կոտորածները չեն ջնջուել եւ չեն ջնջուի երբեք ոչ միայն Հայ ժողովուրդի հոգում, այլ եւ ողջ արդարամիտ ու ողջախոհ քաղաքակիրթ աշխարհի յիշողութիւնից: Միլիոնաւոր անմեղներ են զոհաբերուել ու նահատակուել ոչ միայն Արդիւ Համիդի ու Էնվէր փաշաների, այլ եւ Նուրի փաշաների ու Քեմալի Կարաբէքիրների ղեկավարութեամբ:

Սեւրի դաշնագրով սրբագործուած միացեալ Հայաստանը՝ դա արդար հատուցումն է ոչ միայն միլիոնաւոր Հայ նահատակների անմեղ արեան, այլ եւ օրինական վարձատրութեամբ այն անօրինակ հերոսական պայքարի, որ Հայ ժողովուրդը Ազգովին մղել է 1914-18 թթ. ընդդէմ գերմանական իմպերիալիզմի եւ թուրքական դահիճապետութեան: Վիլսոն թէ Լոյդ Ջորջ, Կլեմանսօ թէ Օրլանտօ բազմիցս ու հանդիսաւոր ազգաբարել էին Հայ Ազգի սրբական իրաւունքը ազատագրել թուրքական անագորոյն բռնապետութիւնից իր միացեալ ու անկախ Հայրենիքում: Մեծ է եղել Հայ ժողովուրդի մարտիրոսագրութիւնն ու հերոսական պայքարը ընդդէմ գերմանա-տառնական

վայրագ բռնապետություն: Սակայն բարդ է նաև ռազմա-քաղաքական գնահատականը Հայ ժողովրդի պայքարի: Անգղիական բանակի հրամանատարը՝ Մերձաւոր Արեւելքում՝ գեներալ Ալեքսին Միւրֆայի գրաւման յաղթանակի մեծ պատիւը Հայ ժողովրդի մարտիկներին վերագրեց, իսկ գերմանական ընդհանուր հրամանատարութիւնն ու շտաբը՝ Հինդենբուրգ-Լիւդնիցդրոյմ՝ Հայ ժողովրդի 1918 թուի դիմադրութիւնը Անդրկովկասում՝ համարեցին կարեւորագոյն պատճառներէց իրենց ռազմական ծախտորոշւեան ոչ միայն Մերձաւոր Արեւելքում: Մեր պայքարը յանուն իրաւունքի եւ արգարութեան շատ թանկ արժեք Հայ ժողովրդին: Թիւրքեան հարիւր հազարների նոր կոտորածներով վրէժը լուծեց իր անպարտութեան համար:

Դեռ շատ է թարմ բաղաբաղկերթ մարդկությունան յիշողութեան մէջ այն ներուսական մասնակցութիւնը, որ ունեցել է Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ Պատերազմով՝ անպարտելի Կարմիր Բանակի մարտական շարքերում. Հերոսաբար պայքարել են Հայ ժողովրդի ազնիւ զաւակները այլ ճակատներում եւս: Ամերիկեան քաջարի բանակի հրամանատարութիւնները քաջ են յայտնի Հայ մարտիկների անունները, որոնք կոտել ու զոհաբերուեալ են ամերիկեան յաղթական դրոշմախի ներքոյ: Յորանիական ազատաւէր ժողովրդի եւս լաւ է յայտնի, որ Յրանիական ժողովրդի վարած հերոսական պայքարում իրենց նուիրական արիւնն են թափել եւ Հայ մարտիկները: Նրանք կոտեցին եւ ընկան ռազմի դաշտերում այն սրբազան հաւատով, որ երբ հնչի իրաւունքի ու արդարութեան յաղթանակի բաղձալի ժամը՝ մոռացութեան չի տրուի նաեւ Հայ ժողովրդի ի արդար դաւար՝ ազատագրումը հայրենի իղմաստների թուրքական բռնադատութեան ճերաններից եւ միացումը ինքնիշխան ու ազատ Սովետական Հայաստանին:

Այսօրուան Համագգային Ձեր Համագումարը պէտք է ազնուօրէն եւ հանդիսաւոր արժէքաւորի ո՛չ միայն մեր դարաւոր անօրինակ մարտիրոսագրութիւնը, այլ եւ մեր պանծալի հերոսամարտը: Ձեր քաղաքական իմաստութիւնից, միակամութիւնից եւ անձնուէր եռանդից եւ կախումաժ, որպէս զի լուծեան մատնուեն այն սեւ ոյժերը, ռո՛րնք յանցագործ փորձեր են կատարում՝ անմեղ զոհերին դաւադրած՝ արիւնկեղա՛մ հիճների պաշտպանութիւն են ստանձնում:

Մենք անվերապահ իրաւունք ունենք իւր պահանջելու, եւ ակնկալելու մեր արդար դատի պաշտպանութիւնը՝ մանաւանդ այսօր, երբ Ատլանտեան խարտիան եւ Միացեալ Ազգերի Կանոնադրութիւնը ազդարարել են մարդկային իրաւունքների, ազգերի ազատութեան, քաղաքական արդարութեան եւ այլ բարձր սկզբունքներ:

Անիրաւ կը լինի քաղաքական ինչ-ինչ անարդար ու միտումնաւոր նպատակներով մերժել մեր սիրեցեալ Հայրենիքից փտարանդեալ Հայի արդար պահանջը՝ — վերադառնալու իր Հայրենիքը, վերատիրելու անագորոյն բռնութեամբ Քուրքիայի կողմից ռազմագրաւուած հայրենի հողամասերը եւ միացնելու այն Ազգային-Անկախ Սովետական Հայաստանին։ Ամերիկեան մեծ Դեմոկրատիան՝ ի դէմս իր նախագահ Վուդրոյ Վիլսոնի, Անգլիական հզօր Պետութիւնը՝ ի դէմս իր դիւանագէտների-քաղաքագէտների բազմիցս յայտարարել են, որ Հայ ժողովուրդը կարող է ազատուիլ եւ Հայ ժողովուրդը կարող է, որպէս անկախ Պետութիւն, գոյութիւն ունենալ միայն Ռուս մեծ ժողովուրդը պաշտպանութեան ներքոյ։ Ձարամտութի՛ւն։ Թէ՞ Թերամտութիւն է վերագրել Սովետական Միութեան ինչ որ ազդեցիւ միտումներ։ Հայ ժողովուրդի դատը հին դատ է, նախասովետական դատ։ Հայ ժողովուրդը՝ իր բոլոր հատուածներով՝ ինքն է յարուցել եւ նախածնունել Հայկական Դատը իր նոր փուլում եւս, ինչպէ՞ս եւ ողջ անցեալում։ Հարազատ Սովետական Հայ Կառավարութիւնը եւ Մենք՝ որպէս պատմական աւանդապահ ազգային իրաւանց եւ գերագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց՝ Մեր դապառի ազգային պարտքն ենք համարում արծազանգել բովանդակ Հայ ժողովուրդի արդար պահանջին եւ պաշտպան կանգնել հարկւր հազարների անմեղ արեամբ ու հերոսական մահով արբազորուած մեր Նուիրական դատին։ Մեր դատը՝ դա իրաւունքի եւ արդարութեան դատն է։ Հայ Ազգի եւ Հայրենիքի Դատը՝ դա քաղաքական խղճի, պարտքի ու բարոյականութեան, խնդիր է։ Եւ այդ դատի յաղթանակը խնդրում եւ ակնկալում

ենք աշխարհի զօրեղներից, դեմոկրատական հզոր պետութիւններից, յուսալով որ գէթ այս անգամ հնադարեան քաղաքակիրթ ու հերոս Հայ ժողովրդի արդար ծայնը լսելի կը դառնայ Միաւորեալ Ազգերի Մեծ Աստուծոյ եւ Հայ բազմաշարք ժողովուրդը այս անգամ գոհ չի դառնայ Մեծ Պետութիւնների ընթացիկ ու ընչասէր հակամարտութիւնների: Հայ Ազգը եւ նորա Ծերունագրող Պատրիարք-Կաթողիկոսը իրենց յոյսը առաջին հերթին կապել են Սովետական Մեծ Միութեան հզոր ու արդարամիտ Կառավարութեան հետ, որի հանճարեղ Առաջնորդը միշտ պաշտպան ու ապաւէն է եղել Հայ Ազգի, Հայ Հայրիկների: Իր անպարտելի հերոսական Կարմիր Բանակի եւ հերոսական աշխատանքութեան ոյժով Սովետական Միութիւնը՝ ազատելով մարդկութիւնը հիւսիսեական ստրկութիւնից՝ մոռացութեան չի տալ երբեք նաեւ Հայ ժողովրդի արդար դատը, բռնադատուած Հայ հողամասերի վերատիրացման հայկական պահանջը:

Շնորհելով մեր երախտագիտութիւնը Սովետական հզոր Պետութեան եւ Ռուս Մեծ Ժողովրդի հանդէպ՝ աւարտում ենք Մեր խօսքը եւ մաղթում յաջողութիւն Ձեր այս ազգային մեծ ձեռնարկին: Մաղթում ենք Բարձրեալին, որ Միացեալ Ազգերին հետեւ պահէ պատերազմի արհաւիրքից, խաղաղութիւն եւ ազատութիւն ապահովէ աշխարհիս բոլոր ազգերին եւ երկիրներին: Մաղթում ենք Ամենակալին առաջնորդել Պետութիւններին հշարտութեան եւ արդարութեան ճանապարհով, որ համայն աշխարհում յաւերժ թագաւորէ ազատութիւնն ու եղբայրութիւնը, խաղաղութիւնն ու քաղաքակրթութիւնը, որոնց այնքան ծարաւի է մարդկութիւնը:

Շնորհք եւ ողորմութիւն Տեազն Մերոյ Յիսուսի Քրիստոսի իջէ եւ հանգիցէ ի վերայ Ձեր. ամէն:

ԳԵՈՐԳ Զ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Տուա կոնգրակս ի 20 ապրիլի 1947 ամի
յետտրդում ամի Հայրապետութեան Մերոյ
ի Ս. Էջմիածին

ԹԵՅԱՍԵՂԱՆՆԵՐ Ի ՊԱՏԻՒ ՎԵՂ. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍ

Նորին Ս. Թեաթեան Ներկայութիւնը Ս. Աթոռոյս մէջ, խանդավառութեան եւ հոգեկան վառութիւնով չըլան մը եղաւ:

28 Օգոստոս շինգարթի կէսերէ վերջ ժամը 8-ին Հայ երիտասարդաց Միութեան կողմէ թեյատեղան մը տրուեցաւ ի պատիւ Նորին Ս. Թեաթեան եւ Պատրիարք Սրբազան Հօր: Հրաւիրուած էին Նոգեշնորհ հայերը, բազմաթիւ հրապրեալներ եւ Միութեան անդամ-անդամակիները:

Իսկ Սեպտ. 3-ին Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ Նորին Ս. Թեաթեան մեկնումին առիթով ողջերթի թեյատեղան մը կազմակերպուեցաւ: Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն, ի պատիւ Զօրեղեանի Յանձնախումբի եւ պշխատող մարմիններու բազմաանդամներուն: Հրաւիրուած էին Նոյնպէս կարգ մը ազգայիններ: Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Նոգեշնորհ հայերու եւ հրաւիրեալ ազգայիններու կողմէն եղան Գահաւակութեան զբոսատիքի խօսքեր, Նորին Ս. Թեաթեան զօրժիւն: Եւ մանաւանդ Ս. Աթոռէն Ներսիս Բարձրաւանդաւ կարճ չըլանի անխոնջ եւ զբոնակելի քործունէութեանը համար:

Եւ Սեպտ. 3-ին ժամը 8.30-ին, Նորին Ամենապատուութեան եւ բովանդակ Միաբանութեանը ուղեկցութեամբ եւ ժողովուրդի բազմութեանը մէջէն եկեղեցի իջաւ վեհաժողովը, ըրաւ իր ուխտը եւ բովանդակ Միաբանութեան եւ ժողովուրդի արտաբանուն ժպիտներու մէջէն հրաժեշտ առաւ, վերադառնալու իր Աթոռը Անթիլիաս:

Ս. ՅԵԿՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Ք 3 Օգոս. Կիր. — Ս. Գառարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Գառարազին էր Հոգ. Ս. Միւռոն վրդ. Կրօնական Ներկայ էին Ն. Ս. Օծութեան Կիրիկիոյ վեհ. Կաթողիկոսը և Ամեն. Ս. Գառարաբը Հայրը: Հայր մերէն առաջ Ն. Ս. Օծութեանը Աւագ Սեղանի բարձրանալով քարոզեց:

Ք 4 Օգոս. Բշ. — Ամառնային արձակուրդի առթիւ, ժառանգաւորաց վարժարանի աշակերտական խումբը Գարոնաւորի պարտէզը մեկնեցաւ: Պիտի վերադառնան Ս. Աստուածածնի վեհարարարան տօնի նախատեսակին: Սոյն տօնին անմիջապէս վերջ պիտի մեկնի Կրօնական խումբը:

Ք 8 Օգոս. Բւր. — Կէսօրէ առաջ, Կիրիկիոյ վեհ. Կաթողիկոսը և Ամեն. Ս. Գառարաբը Հայրը իրենց հետ ունենալով՝ առժամայ աւագ թարգման Հոգ. Ս. Հայրիկ վրդ. Աստուծոյ, պաշտօնական այցեւածութիւն տուին Գաղաթիւնի Բարձր Գործերի՝ Սըր Ալլան Գրեկիկէմին, իր պարտքներէն մէջ:

— Երեկոյին, Ն. Ս. Օծութեանը և Ամեն. Ս. Գառարաբը Հայրը՝ փոխադարձ այցելութիւն տուին Սեղանացւոց Եպիսկոպոսին, և յետոյ Ներկայ գտնուեցան Ս. Նաւահայց Հիւպատոս Պր. Պալաթարի թէյասեղանին, որ սարքուած էր ի պատիւ Նորին Սրբութեան:

Ք 10 Օգոս. Կիր. — Ս. Գառարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր Գողգոթայի մատարն մէջ: Գառարազին էր Կիրիկիոյ Կաթ. Աթոռի Նորենծայ միառան Հոգ. Ս. Թարգմ. Արդ. Փոռտանեան:

— Երեկոյին, Ամեն. Ս. Գառարաբը Հայրը նախագահեց Կիրիկիոյ վեհ. Կաթողիկոսի Յորինիական Կեդրոնական Յանձնաժողովի առաջին նիստին, որուն մէջ Կարգադրուեցան Յորինիական բոլոր հանդիսութեանները:

Ք 17 Օգոս. Կիր. — Ս. Գառարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Գառարազին և քարոզեց Կիրիկիոյ Աթոռի Նորենծայ եպիսկոպոսներէն Գեր. Ս. Դերմինիկ Եպո. Փռտանեան:

— Երեկոյին, ժառ. վարժարանի որսնին մէջ տեղի ունեցաւ Կիրիկիոյ վեհ. Կաթողիկոսի Յորինիական հանգէտը, ի ներկայութեան Ն. Ս. Օծութեան և նախադասութեամբ Ամեն. Ս. Գառարաբը Հայրը: Հանգէտի վերջաւորութեան եղան նահարաւորութիւններ՝ որոնց զուամբը յանգեցաւ շուրջ 800 սպիտի:

Ք 18 Օգոս. Բշ. — Ըստ աւանդական հաստատուն եօթորոսութեան, այս առաւօտ սկսաւ Ս. Աստուածածնի վերափոխման տօնը կանխող երկու շաբաթուան ամենօրեայ հանդիսաւոր պատարաններու մասնաւոր շարքը: Այս պատարաններուն ներկայ կը գտնուին Հոգեւոր Հայրեր, ժառ. սաներ և բազմաթիւ հաւատացեալներ: Հարուսեակարար մինչև վերափոխման տօնը:

Ք 24 Օգոս. Կիր. — Ս. Գառարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր Գողգոթայի մատարն մէջ: Գառարազին էր Հոգ. Ս. Գարգեւ վրդ. Վրթանէսեան:

— Կէսօրէ առաջ Կիրիկիոյ վեհ. Կաթողիկոսը ընկերակցութեամբ Գեր. Ս. Դերմինիկ Եպո. Փռտանեանի, Գեր. Ս. Եղիշէ վրդ. Տէրտէրեանի և Հոգ. Ս. Թարգմ. Արդ. Սեղանի Յողով մեկնեցաւ Նախագահելու իր Յորինիական հանգէտին որ տեղի ունեցաւ Ս. Գրիգորի վարժարանի հանդիսաւորն մէջ:

Ք 27 Օգոս. Դշ. — Երեկոյին, Ամեն. Ս. Գառարաբը Հայրը Ներկայ գտնուեցաւ Երաւադէմի վեհ. Կառավարչի փոխանորդ Պր. Գալստիի պաշտօնական ընդունելութեան:

Ք 28 Օգոս. Եշ. — Երեկոյին, Նորին Ս. Օծութեան վեհ. Կաթողիկոսը և Ամեն. Ս. Գառարաբը Նիկիոյ գտնուեցան Երաւադէմի Հ. Ս. Միւռոնեան ի պատիւ Ն. Ս. Օծութեան սարքած թէյասեղանին որ տեղի ունեցաւ Ս. Թարգմանաց վարժարանի որսնին մէջ:

Ք 30 Օգոս. Եր. — Տօն Շողակաթի Ս. Էրմիամբի. Ամեն. Ս. Գառարաբը Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին և Ներկայ գտնուեցաւ Ս. Գառարազին:

— Վաղուան, Վերափոխման տօնին առթիւ Կէսօրէն յետոյ, Ամեն. Ս. Գառարաբը Հայրը ընկերակցութեամբ Հոգեւոր Հայրերու պաշտօնական գնացով՝ Ս. Աստուածածնայ տաճար գնաց: Հնարաւորաբար մուտք քործեց տաճարը և նախագահեց երեկոյան պաշտամունքին:

— Գերազատի Ս. Դերմինիկ Եպո. ընկերակցութեամբ Հոգ. Ս. Յարութեան Արդ. Մուշեանի, Ամեն գնաց վերափոխման տօնին առթիւ պատարաններու և նախագահելու Յորինիական հաւաքովին:

— Երեկոյին, Կիրիկիոյ վեհ. Կաթողիկոսը և Ամեն. Ս. Գառարաբը Հայրը ընկերակցութեամբ Գեր. Ս. Եղիշէ վրդ. Տէրտէրեանի, այցելութիւն տուին մեծաւոր Տօթ. Վ. Կալպանիին և մասնակցեցան ի պատիւ Նորին Ս. Օծութեան սարքած թէյասեղանին:

Ք 31 Օգոս. Կիր. — Ամեն. Ս. Գառարաբը Հայրը ընկերակցութեամբ Հոգեւոր Հայրերու պաշտօնական գնացով Ս. Աստուածածնայ տաճար գնաց: Հնարաւորաբար մուտք քործեց Ներկայ գտնուեցաւ Ս. Գառարաբին որ մատուցեց Հոգ. Ս. Մուշեան վրդ. Գեմեանեան, և Հայր մերէն առաջ քարոզեց օրուան տօնին վրայ: Գառարազէն վերջ, Նորին Ամենապատառութեան վերադարձաւ պատարան վարժարանի Հոգեւոր Հայրեր ընկերակցութեամբ:

— Ամեն. Ս. Գառարաբը Հայրը Ներկայ գտնուեցաւ երեկոյան պաշտամունքին և նախագահեց նախատօնակին: — Կէսօրէ յետոյ Նորին Ս. Օծութեանը ընկերակցութեամբ Գեր. Ս. Եղիշէ վրդ. Տէրտէրեանի և Հոգ. Ս. Թարգմ. Արդ. Փռտանեանի, Հայֆա մեկնեցաւ Ներկայ ըլլալու իր Յորինիական հանգէտին:

Ն Ի Կ Ո Լ . Ա Ղ Բ Ա Լ Ե Ա Ն

1873 - 1947

Դառն կսկիծով լսեցինք մաթր յայտնի բանասէր Ն. Աղբալեանի: «Միոն», ազգային այս սուգին մէջ կը մասնաւորէ իր վիշտը հանդէպ անգուգական երբեմնի իր աշխատակցին: — Որպէս պատմաբան, գրական քննադատ, բանասէր, դասախօս եւ հոեւոր, բացառիկ տեղ մը ունէր ժեր մեծերուն մէջ: Իր մահը, ինչպէս քսինք, աղէտ մըն է, վասնզի Աղբալեանը կը մեզի առանց լիովին տուած ըլլալու ինչ որ կարող էր տալ:

Ն. Աղբալեան ծնած էր Թիֆլիս 1873-ին: Իր երկրորդական ուսումը առաւ Նախ Դէորգեան ճեմարանի՝ ապա Ներսէսեան վարժարանի մէջ: Յետոյ կը մեկնի Բեթրոկրատ, հետեւելու համար համալսարանական դասընթացներու: Միեւնոյն ատեն քաջածայն եւ տեղեակ եկեղեցական երաժշտութեան, դպրագետի պաշտօն կը վարէ Բեթրոկրատի հայոց եկեղեցիին մէջ: Երկու տարի վերջ կ'անցնի Փարիզ եւ ժամանակ մը կը հետեւի Սորպոնի դասընթացներուն:

Դրական իր գործունէութիւնը կը սկսի 1897-ին, երբ Մուրմ ամսագրին մէջ կը հրատարակէ իր գրական քննադատութիւնները Ա. Իսահակեանի եւ ժամանակակից գրական դէմքերու շուրջ:

Կովկասի մէջ կ'աշխատակցի Մուրմ, Մօսկ եւ Հարիզոն թերթերու: Կը հրատարակէ գրական պարբերաթերթ մը՝ Նոր Հոսանք, որ կը շարունակուի մինչեւ 1914:

Վարած է ուսուցչական եւ տեսչական պաշտօններ, Կովկասի, Պարսկաստանի, Եգիպտոսի եւ Պէլլուսի մէջ: Եղած է յայտնի յեղափոխական եւ բերած իր լայն մասնակցութիւնը մեր ընկերային եւ հասարակական գործունէութեան: Վարած է Նոյնպէս Կրթական Նախարարի պաշտօնը—Դաշնակցական կառավարութեան շրջանին՝ 1928էն սկսեալ Պէլլուսի մէջ Լ. Շանթի հետ կը հիմնէ Հայ Ճեմարանը, որուն գլխաւոր մշակներէն մին էր մինչեւ իր մահը: Աղբալեան որպէս հմուտ բանասէր, քաղցրախօս հոեւոր, տաղանդաշատ քննադատ եւ վաստակաւոր ուսուցիչ, արժանի է բովանդակ հայ ժողովուրդի յարգանքին: Իր մահով հայ գալուստները կը կորսնցնէ իր մեծարժէք մշակներէն մէկը:

Իր մատենագրական դասախօսութիւնները, «Բանասէրի Յուշագիրը» եւ «Պատմութիւն հայ գրականութեան» ուսումնասիրութիւնները, դժբախտաբար կէս մնացած ճեմարաններ են, որոնց ամբողջացումը շատ բան պիտի արժէր մեր գրականութեան:

Ն. Աղբալեանին չտրուեցան պայմաններ իր իրական տաղանդէն մեր սպասուած պսակող. կ'ըսենք ահիկա պարսաւէ աւելի՝ հիացմանը մէջէն իր արժանիքին:

«Միոն», որտազգած վիշտով կ'արձանագրէ գրական մեծ մշակին եւ իր երբեմնի սիրելի աշխատակցին մահը:

Օրհնէնք ԽՀ հանգիստ իր հոգիին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

“ԹԷՔԷՍՆ ՖՈՆՏ”, Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

Յանձնախումբս ձեռնարկած ըլլալով ողբացեալ Վահան Թէքէեանի ան-
տիպ քերթուածներուն ամբողջական հրատարակութեան, բոլոր անոնք որ ի ձե-
ռին ունին աւանդաբար, կամ ի յիշատակ, կամ իբր ձօն, կամ ալպօմի մէջ
արձանագրութեան ձեւին տակ ոեւէ գրութիւն ողբացեալ զրազէտէն, հաճին
յղել Յանձնախումբիս առ ի նկատառում և ի հարկին հրատարակութիւն:

Յանձնախումբս շնորհապարտ պիտի ըլլայ նաեւ թէ մեր ուշադրութեան
ենթարկուին ողբացեալին պատկանող ոեւէ նամակագրութիւն որ կրնայ աւելի
լոյս սփռել մեծ զրազէտին և հանրանուէր մաքառն կեանքին վրայ:

“ԹԷՔԷՍՆ ՖՈՆՏ”, Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

Հասցէ. — Comité “FONDS TÉKÉIAN,”
B. P. 864
Le Caire (Egypte)

(ԿՆԻՔ)

ՄՏԱՑՈՒԱԾ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐՄԻՐ ԱՍՊԱՏԱԿԻ ՕՐԱԳՐԷՆ, պատմութենքներ, գրեց՝ Անդրանիկ Անդրեաս-
եան, ապ. «Պայքար», Պոստոն, 1947, էջ 280:

ՍԻՐԱՑՈՒԹԵՐ, քերթուածներ, գրեց՝ Յովսէփ Թիւքիւնեան, ապ. Դահլիճ, 1947,
էջ 50:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՆԱՐԵԿԸ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Գրեց՝ ԵՂԻՇԷ ՎԱՐԳԱՊԵՏ

Էջ՝ 100

Գին՝ 15 Պապ. Դան.

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐԱԿԱՆ Ա. ՏԱՐԻ

Դ. Յպագուբիւն

Էջ՝ 96

Գին՝ 200 Սուրիական Դան.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԵԶԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ.

**ԸՆԹԱՑՔ
Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ**

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Էջ 100

Գրք 15 Պաղ. Դահ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ԺԱՄԱԳԻՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԱՐԱՐԵԱԼ

Ս. ՍԱՀԱԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԵՒ

ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԳԻՒՏՈՑ ԵՒ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

Ձ. ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՃԱՐԱԿԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ՄԵԾԱՑՈՒՍՑԷՔ, ՇԱՐԱԿԱՆՔ ԽԱՉԻ

ԵՒ ՀԱՐԱՐՁԻՔ ԵԻԱՅԼՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՅՈՒՑԱԿ ԳԻՐՔԵՐՈՒ

ՍՐՔՈՑ ԶԱԿՈՒԲԱՆՑ ՏՊԱՐԱՆՆ

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE